AZG NEW PDF.qxd 10/04/2010 0:11 Page 1

# Ազգ
Azg

10 ԱՊՐԻԼ 2010 ՇԱԲԱԹ 64 (4444)
ISSN: 1829-1651

## Հայ ծանրորդները ցնցեցին Եվրոպան




# Վաշինգտոնյան գագաթաժողովի վրա իր կնիքն է թողնելու Հայաստան-Թուրքիա նորմալացման գործընթացը

*Իսկ գագաթաժողովը մնալու է Սարգսյան-Էրդողան հանդիպման ստվերում*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հատուկ ներկայացուցիչ Ֆերիդուն Սինիրլիօղլուն Երեւան էր գործուղվել ապրիլի 7-ին, հանդիպելով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ: Երեկ նա արդեն Բաքվում էր, որ նրա երեւանյան հանդիպումների մասին պարզաբանումներ ստանան Ադրբեջանի նախագահն ու արտգործնախարարը:

Ինչ վերաբերում է թուրքական լրատվամիջոցներին, ապա դրանք Սինիրլիօղլուի փոխարեն նրա հանդիպումների, ինչպես նաեւ վարչապետ Էրդողանի նախագահ Սարգսյանին հասցեագրած նամակի մասին պարզաբանումներ ստացել են Թուրքիայի արտգործնախարարից, արտգործնախարարության խոսնակից, ինչպես նաեւ՝ թուրքական դիվանագիտական աղբյուրներից:

Արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն Էրդողանի հատուկ ներկայացուցչի այցը գնահատելիս, լրագրողներին ասել է, որ Վաշինգտոնում նախատեսվող Սարգսյան-Էրդողան հանդիպման նախօրյակին Սինիրլիօղլուն Երեւանին փոխանցեց Թուրքիայի տեսակետները, իրականացնելով «շատ դրական եւ կառուցողական» հանդիպումներ:

Արտգործնախարարության խոսնակ **Բուրաք Օզուգերգինը** հայտարարել է, որ Սինիրլիօղլուի երեւանյան հանդիպումներում կողմերը փոխադարձաբար հաստատել են իրենց հավատարմությունը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացին, իսկ դիվանագիտական աղբյուրները նամակի առնչությամբ տվել են հետեւյալ պարզաբանումը. «Այս նամակով վարչապետ Էրդողանը նախագահ Սարգսյանին հայտնեց, որ Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացումը Թուրքիայի համար ոչ թե գործընթաց է, այլ նպատակակետ: Դրա առջեւ ծառացած խոչընդոտները հաղթահարելու համար Թուրքիան բուռն եւ դրական էներգիա է ծախսում:

Տես էջ 3

ՏԱՎՈՒՇՅԱՆ ՍՏՈՒԳԱՅՑԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

# Նախագահը՝ հավանական պատերազմի մասին

«Պատերազմի վտանգը միշտ եղել է, կա ու կլինի, քանի դեռ տարածաշրջանում խաղաղություն չի հաստատվել»: Այդ մասին հայտարարել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Տավուշի մարզ կատարած այցելության ժամանակ՝ միաժամանակ նշելով, որ մոտալուտ պատերազմի վտանգ չի տեսնում:

«Մեր բանակը մարտունակ է, եւ եթե Աստված մի արասցե նման բան լինի, մենք հանկարծակիի չենք գա», այնուամենայնիվ նկատել է նախագահը:

«Մեր ժողովրդի համար այդ վտանգներն առարկայական են դառնում երկու դեպքում: Առաջինը, երբ ադրբեջանցիները, այլ մեթոդ չունենալով, փորձում են հոխորտալ շատ «միլիտարիստական» պահվածք դրսեւորելով: Եվ երկրորդ, երբ որոշ ուժեր փորձում են այդ հանգամանքը շահարկել: Ես չեմ կարող հասկանալ այն լրատվամիջոցներին, որոնք հարցեր են ուղղում, թե ո՞ր պաշտոնյան պատերազմի վերսկսման դեպքում կմասնակցի. դա մարդկային տեսակի հարց է: Վստահ եմ, որ ընդդիմության մեջ էլ կան մարդիկ, որոնք պատերազմի դեպքում կլինեն առաջին շարքերում, եւ իշխանության մեջ կան մարդիկ, որոնք ճողոպրելու են», ասել է ՀՀ նախագահը:

**Ն. Մ.**

# ԱԺ նախագահի լիբանանյան հանդիպումները

Լիբանանի Ազգային ժողովի նախագահ Նաբիհ Բերրիի հրավերով ապրիլի 11-ի երեկոյան եռօրյա պաշտոնական այցով Լիբանան կմեկնի ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի գլխավորած խորհրդարանական պատվիրակությունը, որի կազմում են ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար Գեղամ Ղարիբջանյանը, պատգամավորներ Վահան Հովհաննիսյանը, Հովհաննես Մարգարյանը, Արմեն Մարտիրոսյանը, Մարտին Սարգսյանը, Վահե Էնֆիաջյանը, Արայիկ Գրիգորյանը:

Հայաստանի ԱԺ մամուլի ծառայությունից հայտնում են, որ Բեյրութում ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը հանդիպումներ կունենա Լիբանանի նախագահ, գեներալ Միշել Սուլեյմանի, ԱԺ նախագահ Նաբիհ Բերրիի, վարչապետ Սաադ Հարիրիի, ԱԳ նախարար Ալի Շամիի, ինչպես նաեւ միջխորհրդարանական բարեկամական խմբի անդամների հետ:

Նախատեսված են հանդիպումներ Լիբանանի հայկական ավանդական կուսակցությունների եւ հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Ապրիլի 14-ին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը կվերադառնա Երեւան:

# «Քրոջս ու նրա աղջկան մերկացրին, բենզին լցրեցին ու վառեցին»

*Մարաղայի ողբերգությունից անցել է 18 տարի*

Լեռնային Ղարաբաղի ամենամեծ բնակավայրերից մեկը՝ Մարաղան, ղարաբաղյան շարժման առաջին օրից կանգնեց վտանգի առաջ: 1992 թ. ապրիլի 10-ին ադրբեջանցի օմնականները ներխուժեցին, ավերեցին ու հրկիզեցին գյուղը: Դաժան կոտորածներից սպանվեց շուրջ 100 մարաղացի: Շատերը սպանվեցին փախուստի ճանապարհին: 63-ը գերեվարվեցին, որոնցից 9 երեխաներ էին: Նրանցից 7-ը վերադարձվել են, 17-ը՝ փոխանակվել, մեկին կարողացել են գումարով հետ բերել, մյուսն էլ հաջողացրել է փախչել: Ավելի ուշ տեղեկություններ ստացվեցին 8 հոգու սպանության մասին: 29-ի ճակատագիրը մինչ այսօր հայտնի չէ:



«Արյան գաղջ հոտը բռնել էր շուրջբոլորը: Թուրքերը հրդեհեցին գյուղը: Երեք ժամ անց Մարաղան վերածվեց այրվող հսկայական թոնրատան: Անճանաչելիորեն խոշտանգվել էին բազմաթիվ մարաղացիներ, գյուղի բնակիչների մի ստվար մասը գերվել էր... Սպանդը շարունակվեց հինգ ժամ: Նրանք գլխատեցին դպրոցի տնօրեն Երվանդ Հովակիմյանին եւ նրա տիկնոջը, ապա մարմինները գցեցին խարույկի մեջ»:

Մարաղայի ողբերգությունից հրաշքով փրկվածներից **Վալյա Խաչիկյանը** հետագայում հիշում էր, որ գյուղի ռմբակոծությունը սկսվեց ապրիլի 9-ի երեկոյան: «Արկերը պայթում էին գրեթե ամեն վայրկյան: Գյուղում 3000 արկ է պայթել: Այդ ժամանակ ես եւ ամուսինս գտնվում էինք նկուղում, ուր ապրում էինք արդեն երեք տարի: Նրանք, ովքեր չկարողացան լքել գյուղը, մորթվեցին, այրվեցին, գերեվարվեցին: Իսկ փախչողներին դժոխային ճանապարհ էր սպասում՝ ռմբակոծությունների ներքո»:

Տես էջ 3

# ՔՍՄ-ն հորդորում է Անկարային վերանայել հայերի կոտորածները

Գերմանիայի Քրիստոնեա-սոցիալիստական միությունը կոչ է անում Թուրքիային վերանայել 20-րդ դարասկզբին հայերի դեմ իրագործված եղեռնը (բնագրում՝ Massaker- Ան. Հ.):

«Թուրքիան վերջապես պիտի անկեղծ եւ հրապարակավ հանդես գա այս խնդրով», «Մյունխեներ Մերկուր»-ին իր պահանջն այսպես է ձեւակերպել ՔՍՄ-ի գլխավոր քարտուղար **Ալեքսանդր Դոբրինդտը** Մյունխենում: Այն, որ Թուրքիայում այսօր հայերի հանդեպ իրագործված ոճրագործության վերաբերյալ ազատ բանավեճի հնարավորություն չկա, վկայում է այնտեղ կարծիքի ազատության վիճակի մասին, ծանուցում է գերմանական լրատուն:

«2005-ին Բունդեսթագի բանաձեւով հորդորել էինք անվերապահ վերանայել հայոց կոտորածները, բայց Թուրքիան մեր կոչը անուշադրության մատնեց», ասել է ՔՍՄ-ի գլխավոր քարտուղարը: Մի կողմից այդ երկիրն ուզում է ԵՄ մտնել, մյուս կողմից՝ հայերի կազմակերպված տեղահանումն ու բնաջնջումը լիովին չի խոստովանում: Պատմության մռայլ էջերի վերանայումը եվրոպական արժեքային մշակույթի պայման է: Թուրքիան շատ հեռու է դրանից», ասել է Ալեքսանդր Դոբրինդտը:

1915-17-ին 1,5 միլիոն հայեր թուրքական զինուժի կողմից կոտորվեցին եւ մահվան աքսորի ճանապարհին սպանվեցին: Օսմանյան կայսրության ծնունդ Թուրքիան բոլոր միջոցներով ուզում էր խափանել հայերի անկախության ձգտումները: Անկարան մինչեւ օրս էլ հրաժարվում է անցյալի այս հատվածը վերանայել:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Դեմոկրատական կուսակցության երիտասարդական թեւը, արձագանքելով Հայոց ցեղասպանության նահատակների ոգեկոչմանն ուղղված 1,5 միլիոն ծառ տնկելու՝ Ռուսաստանի հայերի միության, Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությանը, հայտարարում է, որ իր ուժերով մինչեւ 2015 թ. 50 000 ծառ է տնկելու հանրապետության բոլոր մարզերում::

*Հայաստանի Դեմոկրատական կուսակցության մամուլի ծառայություն*

# Զրպարտանքն ապաքրեականացնող օրենքը ցավոտ պետք է լինի, բայց ոչ թալանչիական

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երբ խորհրդարանում առաջին ընթերցմամբ ընդունվում էր Հովհաննես Մարգարյանի, Ռուբեն Գեւորգյանի եւ Հովհաննես Սահակյանի ներկայացրած այն օրենսդրական փաթեթը, որով առաջարկվում է ապաքրեականացնել զրպարտանքը, անձի արժանապատվությանը հասցված վիրավորանքը, մենք բավական մանրամասն ներկայացրինք պատգամավորական տեսակետները, այնպես որ նույն թեմայով ԱԺ պետաիրավական հանձնաժողովի կազմակերպած լսումներից եթե պատգամավորական կարծիքների վրա շատ չծանրանանք՝ ոչինչ:

Հանձնաժողովի նախագահն ու փաթեթի համանահեղինակները թեեւ գոհ էին քննարկումից, սակայն անկեղծ ասենք, այն առանձնապես մեզ համար չթվաց նպատակին ծառայող, այն է՝ օգնել լրամշակելու առաջին ընթերցում անցած փաթեթը, քանի որ նախ՝ ոչ մի լրատվամիջոցի խմբագիր այս լսումներին չէր մասնակցում («Հետք» խմբագիրը բացառություն էր, որովհետեւ լրագրողական կազմակերպություն էր ներկայացնում), մասնակցում էին լրագրողական կազմակերպությունների ղեկավարներ: Այսինքն՝ լրատվամիջոցներին նաեւ ուղղված այս փաթեթի վերաբերյալ առաջարկները հնչում էին միջնորդավորված: Ասենք, որ այս փաթեթը, ճիշտ է, եվրոպական պարտավորությունների շրջանակում է, սակայն այն դեպքում, երբ, ասենք, թեկուզ խորհրդարանում կան տասնյակ լրագրողներ, ովքեր դուրս չեն գալիս մամուլի ստվերային ուղղորդիչների առանձնասենյակներից եւ ա՛յդ ճանապարհով են ստանում մեր քաղաքականների ու փողատերերի՝ միմյանց վրա ցեխաշպրտումների կոմպրոմատները, չենք կարծում, որ այս փաթեթի ընդունումից հետո կփոխվեն, որովհետեւ այն ավերը, որ գործում է նրանց կողմից միմյանց հասցեին շպրտված պղծությունը, տասնյակ ու հարյուր անգամ ավելի մեծ գին ունի, քան փաթեթով սահմանված կես-մեկ մլն դրամը: Եվ նրանց համար ոչինչ չի նշանակելու այդ դրամը իրենց հովանավորած լրատվամիջոցի ու լրագրողի համար վճարելն ու շարունակելը նույն կերպ: Իսկ ահա իսկական լրատվություն հասցնելու առաքելությունը ստանձնած լրատվամիջոցները տարին մեկ-երկու անգամ էլ տուգանվելով՝ կտուժեն ֆինանսապես եւ չեն դիմանա կոմպրոմատային մրցակցությանը:




Տես էջ 8

# «Մենք վերականգնման փուլում ենք»

«Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ծանր վնաս հասցրեց մեր տնտեսությանը, ստիպված էինք մի կողմից դիմակայել մեր տնտեսության անկմանը, մյուս կողմից անել այնպես, որ այդ ճգնաժամի հետեւանքները շատ ծանր չլինեն մեր քաղաքացիների համար եւ առաջին հերթին սոցիալապես անապահով խավերի համար»: Այս մասին երեկ հայտարարեց աշխատանքային այցով Տավուշի մարզ մեկնած ՀՀ նախագահ **Սերժ Սարգսյանը**:




Ըստ նրա՝ կառավարությանը հաջողվեց չկրճատել սոցիալական որեւէ ծրագիր, չուշացան աշխատավարձերը, թոշակներն ու նպաստները:

«Ես կարծում եմ, որ այսօր մենք գտնվում ենք վերականգնման փուլում, որովհետեւ արդեն 3-րդ ամիսն է՝ նկատվում է տնտեսական աճ: Ապրիլի 20-ին կիմանանք, թե ինչպիսին էին 3 ամսվա տնտեսական արդյունքները: Առաջին 2 ամիսներին մեր տնտեսությունն ունեցել է 3,1 տոկոս աճ: Սա համարյա այնքան է, ինչքան 2008թ. առաջին 2 ամիսներին, հետեւաբար ես չեմ հասկանում վարչապետի, կամ կառավարության փոփոխությունների վերաբերյալ խոսակցությունները, դրանք ինձ հասկանալի էին ճգնաժամի պարագայում, սակայն այսօր, երբ տնտեսությունը կամաց-կամաց վերականգնվում է, իմաստ չունի խոսել թիմի փոփոխության մասին: Ինչ վերաբերում է մեկ-երկու նախարարների փոփոխությանը, ապա դա սովորական երեւույթ է. մշտապես կարող են փոխվել նախարարներ, այդ գործընթացը տնտեսական քաղաքականության հետ կապ չունի», ասաց Սերժ Սարգսյանը:

«Ճգնաժամը հաղթահարվում է ոչ միայն տնտեսության մեջ ներդրում կատարելով, ոչ միայն զուտ տնտեսական գործունեությամբ, այլեւ առաջին հերթին գիտակցության մեջ: Մեր բոլորի գիտակցության մեջ հիմա մենք պարտավոր ենք տեսնել ճգնաժամի հաղթահարում», նկատեց Սերժ Սարգսյանը՝ հավելելով, որ եթե Հայաստանում ճգնաժամի ամբողջովին հաղթահարված լինելու մասին խոսողները ելնում են այս տեսակետից, ապա ողջունելի է նրանց ասածը. «եթե ելնում են նրանից, որ դրական սպասումներ ձեւավորեն, որպեսզի մարդիկ սկսեն ծախսել, շինարարը սկսի կառուցել, ավտոմեքենավաճառը սկսի մեքենաներ գնել եւ այլն»: Իսկ եթե ասում են, որ ճգնաժամը հաղթահարված է, որպեսզի ի ցույց դնեն կատարված աշխատանքը կամ հպարտանան ինչ-որ բանով, նախագահը դա չի կարեւորում եւ չի արժեւորում:

«Եվ բոլոր նրանք, ովքեր ասում են, որ Հայաստանը խոր ճգնաժամի մեջ է, նրանք էլ երեւի իրավունք ունեն նման կարծիք հայտնելու, բայց եթե նրանք կարծիք են հայտնում, որպեսզի կառավարությանը շահագրգռեն ավելի ինտենսիվ աշխատել, սա մի տարբերակ է, իսկ եթե ասում են, որպեսզի վիճակն էլ ավելի վատանա, ավելի վատ սպասումներ ձեւավորեն, իհարկե, այդպիսի մոտեցումն ինձ համար ընդունելի չէ եւ ընկալելի չէ», հայտարարեց Սերժ Սարգսյանը:

Ըստ նրա՝ բավականաչափ աշխատանք է կատարվել, եւ դա լավ է գնահատական է ստացել միջազգային կազմակերպությունների կողմից:

«Իհարկե, սա բավարար չէ: Որովհետեւ մենք գտնվում ենք դեռեւս վերականգնման փուլում եւ պարտավոր ենք իրականացնել նոր ծրագրեր, պարտավոր ենք անպայման հաշվետու լինել նախկինում արված ծրագրերի մասով: Մենք մոտակա տեսանելի ապագայում կխոսենք այն մեծ ծրագրերի ընթացքի մասին, որոնց մասին մենք խոսել էինք դեռ մեկուկես տարի առաջ», նշեց Սերժ Սարգսյանը:

Նախագահը խոսեց նաեւ Ռոբերտ Քոչարյանի «հնարավոր վերադարձի» եւ դրա շուրջը բարձրացված աղմուկի մասին. «Ինձ համար շատ տարօրինակ է այն ջղաձիգ արձագանքը որոշ քաղաքական շրջանակներում, կապված Քոչարյանի գործողության հետ՝ լինի դա շրջագայություն կամ կարծիքի հայտնում: Անհասկանալի է, որ մեզ խելք են սովորեցնում մարդիկ, որոնք երկու հոգու չեն կարող ղեկավարել, կամ երկու գիրք չեն կարդացել, մարդիկ, ովքեր Քոչարյանի մոտ չեն կարող երեւալ: Ի՞նչ է, նրանք կարող են կարծիք հայտնել, Քոչարյանը՝ ո՞չ: Ես նորմալ եմ համարում, երբ Քոչարյանը կարծիք է հայտնում կամ այցելում է այս կամ այն երկիր: Այստեղ տարօրինակ ոչինչ չկա: Աշխարհում սա ընդունված գործելակերպ է: Խորհուրդ եմ տալիս որոշ լրատվամիջոցների չեղած բաներ չփնտրել», հայտարարեց նախագահը՝ հավելելով, որ Ռոբերտ Քոչարյանը միշտ էլ եղել է քաղաքականության մեջ:

Ն. Մ.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ

# Հրաժարվել 301-րդ հոդվածից եւ ռազմատենչ թշնամանքի բոլոր ձեւերի դրսեւորումներից

**Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) 37-րդ համագումարում FIDH-ն ու այդ կազմակերպությունում Հայաստանի եւ Թուրքիայի անդամ կազմակերպությունները համատեղ հայտարարություն են տարածել, որում մասնավորապես ասվում է. «Համոզված ենք, որ մարդու իրավունքների պաշտպանությունը Թուրքիայում եւ Հարավային Կովկասի բոլոր երկրներում խաղաղաստեղծ գործընթացի, հաշտեցման եւ բարիդրացիական հարաբերությունների գրավականն է եւ նպատակ ունի երաշխավորել սահմանների բոլոր կողմերում բնակվող անձանց անվտանգությունը, բարեկեցությունն ու արժանապատվությունը:**

**Կոչ ենք անում Հայաստանի եւ Թուրքիայի իշխանություններին եւ հասարակություններին՝ համատեղել ջանքերը եւ ապահովել այնպիսի միջավայր ու գործընթացներ, որ թույլ կտան հատուցել անցյալում տեղի ունեցած մարդու իրավունքների ոտնահարումների, այդ թվում՝ ազգության, կրոնի եւ այլ հիմքերով խտրականության համար, ինչպես նաեւ հավատարիմ մնալ միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված մարդու իրավունքների պաշտպանության չափանիշներին:**

**Տարածաշրջանում դեպի մարդու իրավունքները հարգանքն ապահովելու նպատակով հայցում ենք խոսքի ազատություն բոլոր երկրներում եւ առաջարկում ենք հրաժարվել բոլոր այն օրենքներից եւ գործողություններից, որ սահմանափակում են խոսքի ազատությունը, մասնավորապես՝ հայ-թուրքական երկխոսությանը խոչընդոտող Թուրքիայի քրեական օրենսգրքի 301 հոդվածից:**

**Հորդորում ենք Թուրքիայի եւ Հայաստանի իշխող եւ ընդդիմադիր բոլոր քաղաքական ուժերին կատարել իրենց պարտքը եւ ձեռնարկել երկու պետությունների եւ հասարակությունների միջեւ հարաբերությունները կարգավորելուն ուղղված բոլոր անհրաժեշտ քայլերը, մասնավորապես՝ իրականացնելով դիվանագիտական հարաբերություններ հաստատելու եւ սահմանները բացելու վերաբերյալ երկկողմանի արձանագրությունը: Այս ուղղությամբ առաջընթացը եւ Թուրքիայում ժողովրդավարական ձեւափոխումների գործընթացը բարենպաստ միջավայր կձեւավորեն Հայոց ցեղասպանության ցավալի խնդրին անդրադառնալու համար:**

**Մենք դատապարտում ենք տարածաշրջանի պետությունների որոշ կառույցների ռազմատենչ հավակնություններով սնվող թշնամանքի բոլոր ձեւերն ու դրսեւորումները:**

**Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարատեւ խաղաղություն հաստատելու եւ ապազգային փոխադարձ թշնամանքը կանխելու նպատակով կոչ ենք անում երկու պետությունների կառավարություններին վավերացնել եւ կատարել Հռոմի՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը:**

**Երկու հասարակությունների միջեւ կամուրջներ կառուցելու նպատակով կոչ ենք անում երկու պետություններին՝ իրականացնել ներառական քաղաքականություն եւ հրաժարվել սահմանափակող մոտեցումներից կյանքի բոլոր ոլորտներում:**

**Կոչ ենք անում երկու երկրների կառավարություններին եւ քաղաքացիական հասարակություններին՝ խթանել հավասար եւ արդար վերաբերմունք բոլոր, այդ թվում՝ մամուլի, կրթության, վարչարարության, իրավակիրարկման եւ հանրային կյանքի այլ ոլորտներում»:**

**FIDH-ի 37-րդ համագումարի բանաձեւում նշվում է, որ իրենք իրենց տուրքն են մատուցում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:**

Հ. Ա.

# Հայոց ցեղասպանության վերաբերյալ 12.000 փաստաթուղթ Ազգային արխիվում

**Ժողովրդագետ Վերժինե Սվազլյանի «Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների վկայություններ» գիրքը արժեքավոր է հատկապես վերապրածների հուշերով եւ փաստաթղթերով: Աշխատանքի համար Սվազլյանն արժանացել է ՀՀ նախագահի եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ոսկե մեդալներին: Որպես պարգեւ ստացած գումարը ժողովրդագետը հատկացրել է գրքի լրացված տարբերակի հրատարակմանը՝ հայերեն, անգլերեն եւ թուրքերեն լեզուներով:**

**Գիրքը լրացումներով լույս կտեսնի այս տարի: 50 տարվա ընթացքում հավաքված 600 միավոր փաստաթղթին նոր գրքում կավելանան նաեւ վերջին 10 տարվա ընթացքում ձեռք բերված 100 միավորը: Գրքի թուրքերեն տարբերակը կհրատարակվի Թուրքիայում, անգլերենը՝ ԱՄՆ-ում: Սվազլյանը նկատում է, որ վերապրողների շուրթերից կարողացել է կորզել բացառիկ երգեր, սաղեր, բանահյուսություններ, որոնց նշանակությունը շատ մեծ է: Երգերի մեծ մասը գրքում ներկայացված են նաեւ նոտաներով:**

**Սվազլյանը պատմում է, որ հաճախ դիմել է արտասովոր քայլերի, որպեսզի կարողանա գրի առնել վերապրածների հիշողությունները: Մի անգամ խաբել է Ստամբուլի «Սուրբ Փրկիչ» հիվանդանոցի թուրք զինվորին, ձեւացել հիվանդ, ավելի քան երկու ժամ նարկոզ ընդունել, զրուցել 40 հայի հետ:**

**Սվազլյանի հեղինակած գրքերը պահվում են նաեւ Ազգային արխիվում: Հայոց ցեղասպանության վերաբերյալ արխիվում կա 12.000 փաստաթուղթ: Դրանք մասնագետները դասակարգում են 4 խմբի՝ հոգեւորականների նամակներ, տարբեր երկրների դեսպանների զեկուցագրերի պատճեններ, գաղթականների հուշեր, վկայություններ, լուսանկարների բնօրինակներ: Ազգային արխիվի փոխտնօրեն Էդգար Հովհաննիսյանը նկատում է, որ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Հովհաննես Թումանյանի գլխավորած հանձնաժողովի կազմած տեղեկագիրը:**

**«700 էջից բաղկացած այդ տեղեկագիրը ներկայացնում է գաղթականների ունեցվածքը, ընտանիքի անդամների թիվը: Դրանք հետագայում կարելի է օգտագործել պահանջատիրության նպատակներով», «Հենարան» մամուլի ակումբում ասաց նա:**

**Ցեղասպանության 95-ամյա տարելիցի կապակցությամբ մեկ շաբաթից Ազգային արխիվում կբացվի լուսանկարների եւ փաստաթղթերի ցուցահանդես:**

Հ. Հ.

# Ախալցխայում օծվել է հայկական Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին

Վրաստանի Ախալցխայի շրջանի Ծիրա գյուղում ապրիլի 8-ին տեղի է ունեցել Սուրբ Հրեշտակապետաց (Սուրբ Գեւորգ) հայկական եկեղեցու օծման արարողությունը: Եկեղեցում պատարագ է մատուցել Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Ներկաներին ներկայացվել է Ախալցխայի Հայկական երիտասարդական մշակութային-կրթական կենտրոնի շրջանավարտների համերգը:

Եկեղեցու վերականգնողական աշխատանքներն սկսվել էին դեռ 90-ականներին՝ Ղազախստանում բնակվող գործարար Ալեքսանդր Մաթեւոսյանի եւ Ծիրա գյուղի բնակիչ Լեւոն Մաթեւոսյանի ջանքերով, վերականգնվել են տանիքը, հատակը եւ եկեղեցու ճակատային մասը:

Այսօրինակ իրադարձությունները մեծապես ողջունելի են, քանի որ հայաբնակ Ջավախքում հայկական եկեղեցիներ դեռ բավականին թվով պահպանվել են, սակայն դրանց զգալի մասը չի գործում: Օծվելուց եւ վերաբացվելուց հետո էլ Ջավախքի եկեղեցիները հոգեւորականների կարիք ունեն, ինչը չի լրացվում կադրերի բացակայության պատճառով:

Ախալցխայի եկեղեցում պատարագ մատուցած Վիրահայոց թեմի առաջնորդը **«Ազգի»** հետ զրույցներում բազմիցս է բարձրացրել Վրաստանում Հայ առաքելական եկեղեցու սպասավորների սակավաթիվ լինելու խնդիրը, որ դեռեւս լիովին լուծում չի ստանում: Հուսանք, որ հունիսին Թբիլիսի եւ Ջավախք Հայոց կաթողիկոսի այցելությունը կնպաստի վիրահայոց թեմի խնդիրների լուծմանը, որոնց զգալի մասն էլ կախված է վրաց իշխանություններից եւ եկեղեցու որոշումներից:

Ա. Հ.

# Արտաքին ընթացիկ գնահատում հանրակրթական դպրոցներում

Գնահատման եւ թեստավորման կենտրոնը (ԳԹԿ) 2009-2010 ուսումնական տարվա ընթացքում հանրակրթական դպրոցներում անցկացրել է արտաքին ընթացիկ գնահատում: Աշակերտների գիտելիքները ստուգվել են թեստային եղանակով: Ընթացիկ գնահատման միջոցով ԳԹԿ-ն մտադիր է պարբերաբար տեղեկատվություն ստանալ կրթության մակարդակի վերաբերյալ:

«Քանաքեռ-Զեյթուն, Ավան համայնքների եւ Սյունիքի մարզի շուրջ 40 դպրոցներում՝ 7600 աշակերտների մասնակցությամբ, անցկացրել ենք ընթացիկ գնահատում: Արդյունքները, ցավոք, գոհացուցիչ չեն, հատկապես, բնագիտական առարկաներից՝ ֆիզիկայից, քիմիայից եւ կենսաբանությունից», երեկ ԳԹԿ-ում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց կենտրոնի տնօրեն **Գուրգեն Խաչատրյանը**:

Առաջադրանքները գնահատվել են 20-30 բալանոց համակարգով: Քիմիա առարկայից 8-րդ դասարանցիների 62 տոկոսը ստացել է անբավարար, ֆիզիկայից՝ 31 տոկոսը, կենսաբանությունից՝ 35 տոկոսը, աշխարհագրությունից՝ 44 տոկոսը: Շատ ցածր է նաեւ գերմաներենի իմացության մակարդակը, ընթացիկ ստուգմանը մասնակից աշակերտների շուրջ 74 տոկոսը գերմաներենից ստացել է անբավարար գնահատական: Ընդհանուր առմամբ բարվոք են եղել հայոց պատմություն եւ մաթեմատիկա առարկաներից ստացված արդյունքները:

Գուրգեն Խաչատրյանը նշեց, որ ընթացիկ գնահատման նպատակն է ստուգել աշակերտների ընթացիկ առաջադիմությունը եւ այդ ձեւով նաեւ նպաստել կրթության որակի բարձրացմանը:

ԳԹԿ-ն արդեն ունի բուհերի դիմորդների նախնական թվերը: Հայաստանի Հանրապետությունում եւ Լեռնային Ղարաբաղում դիմորդների ընդհանուր թիվն արդեն 17505 է:

Վերջում տեղեկացնենք, որ կառավարության որոշմամբ՝ որպես ԳԹԿ-ի լիազոր մարմին այժմ հանդես է գալիս կառավարության աշխատակազմը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 09/04/2010 22:57 Page 1



ԱԶԳ Անցուդարձ

# Ի՞նչ է անելու Հայաստանը, եթե վաշինգտոնյան գագաթաժողովում քայլեր նախաձեռնեն Իրանի դեմ

Հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացում ինչ-որ փոփոխություն մտցնելու հեռանկարի հավանականությունը մեծացրել է ուշադրությունն այնպիսի իրադարձության հանդեպ, ինչպիսին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի նախատեսվող հանդիպումն է Վաշինգտոնում, որտեղ երկու ղեկավարները կլինեն ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հրավերով՝ մասնակցելու միջուկային անվտանգության գագաթաժողովին:

Դեռեւս հրապարակային չէ եւ թերեւս չդառնա էլ այն, թե ինչ օրակարգ կարող է ունենալ Սարգսյան-Էրդողան հանդիպումը, սակայն ակնհայտ է, որ Հայաստանի նախագահի Վաշինգտոն այցելության ընթացքում կարեւորագույն միջոցառումը հենց այդ հանդիպումն է այն դեպքում, երբ Թուրքիայի պարագայում մասնակցությունը միջուկային անվտանգության հարցերով գագաթաժողովին եւս իր նշանակությունն ունի:

Հայ-թուրքական գործընթացի կարեւորման ֆոնին էլ թերեւս անուշադրության է մատնվել մի կարեւոր հանգամանք. Հայաստանը գնում է, անկախ բոլոր իրական ու ձեւական երեւույթներից, մասնակցելու մի գագաթաժողովի, որտեղ հիմնական հարցերից մեկն Իրանի խնդիրն է: Տվյալ դեպքում խնդրահարույց է դիտարկվում մի երկիր, որի հետ Հայաստանը բավականին լավ հարաբերություններ ունի:

ԱՄՆ նախագահ **Բարաք Օբաման** եւ Ռուսաստանի նախագահ **Դմիտրի Մեդվեդեւը** ապրիլի 8-ին Պրահայում ստորագրեցին ռազմավարական հարձակողական սպառազինությունների կրճատման նոր համաձայնագիրը, որի գործողության ժամկետը տասը տարի է, իհարկե, եթե երկու երկրների խորհրդարանները վավերացնեն այս փաստաթուղթը:

«Փաստաթուղթը, որ մենք ստացանք, լիովին հավասարակշռում է ռուսական ու ամերիկյան կողմերի շահերը: Կարեւոր է, որ չկան հաղթողներ ու պարտվողներ», ըստ «Ազատության», Պրահայում հայտարարել էր Ռուսաստանի նախագահը:

Չնայած լավատեսական հայտարարություններին՝ Մոսկվայի եւ Վաշինգտոնի միջեւ մի առանցքային խնդրում տարաձայնությունները պահպանվում են. խոսքը հակահրթիռային պաշտպանության ամերիկյան համակարգի մասին է: Օբամայի խոսքով, Սպիտակ տունն այս թեմայով բանակցությունները Մոսկվայի հետ շարունակելու է:

Ստորագրված պայմանագրի համաձայն, Ռուսաստանն ու Միացյալ Նահանգները միջուկային մարտագլխիկների թիվը 2200-ից նվազեցնում են մինչեւ 1550: Միջուկային զենք կրելու կարողություն ունեցող հրթիռների ու ռազմական օդանավերի թիվը կսահմանափակվի 700-ով: Սահմանվում է նաեւ համաձայնագրի կատարման փոխադարձ վերահսկման մեխանիզմ. երկու կողմերը տարեկան 18 ստուգական այցերի կազմակերպման հնարավորություն կստանան:

Պրահայում ռուս-ամերիկյան բանակցությունների ընթացքում Բարաք Օբաման եւ Դմիտրի Մեդվեդեւը քննարկել են նաեւ Իրանի միջուկային ծրագրի շուրջը ստեղծված իրավիճակը: Ըստ ամենայնի, կողմերի դիրքորոշումները գնալով մերձենում են: «Ցավոք, Թեհրանը չի արձագանքում իրեն առաջարկված մի շարք կառուցողական, փոխզիջումային առաջարկություններին: Մենք չենք կարող այդ հանգամանքի վրա աչք փակել: Այնպես որ, ես չեմ բացառում, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կրկին կարող է քննարկել Իրանի դեմ պատժամիջոցների հարցը», Պրահայում նշել է Մեդվեդեւը՝ ընդգծելով, որ Իրանի հանդեպ պատժամիջոցները պետք է խելամիտ բնույթ կրեն:

ԱՄՆ նախագահն էլ, իր հերթին, հայտարարել է, թե թույլ չեն տրվի գործողություններ, որ կոտնահարեն «Միջուկային զենքի չտարածման մասին» պայմանագրի դրույթները: «Մեզ համար անընդունելի է, երբ կենսական նշանակություն ունեցող տարածաշրջանում սպառազինությունների մրցավազքի ռիսկ է առաջանում, երբ կասկածի տակ են դրվում միջազգային հանրության վարկն ու հավաքական անվտանգությունը»:

Եվ ահա այսպիսի տրամադրությունների գերակշռության պայմաններում Հայաստանի նախագահը Վաշինգտոն կմեկնի մասնակցելու միջուկային անվտանգության հարցերով գագաթաժողովին: Իսկ եթե գագաթաժողովն ինչ-որ հայտարարությամբ հանդես գա կամ ինչ-որ որոշումներ կայացնի, Հայաստանը մասնակից չի՞ լինելու դրանց, ձեռնպա՞հ է մնալու, թե՞ մասնակցությամբ պարտադրված միանալու է Իրանի դեմ նախաձեռնություններին:

Գուշակությունները տեղին չեն այս պարագայում, բայց պետք է հստակ գիտակցել, որ մի հարեւանի հետ հարաբերություններ նորմալացնելու դեպքում մյուսի հետ դրանք որեւէ կերպ, թեկուզ ամենաչնչին դրսեւորմամբ փչացնելը «պետության շահ» ձեւակերպվելուց շատ հեռու կլինի:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Վաշինգտոնյան գագաթաժողովի վրա...

*1-ին էջից*

Թուրքիան նպատակ ունի վարել ոչ թե իրավիճակը փրկելու քաղաքականություն, այլ՝ առաջացման դեպքում հաղթահարել խնդիրները երկկողմ հարաբերություններում: Այս նպատակամղվածությանն են ուղղված մեր բոլոր ջանքերը: Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման առումով Թուրքիան մշտապես քաղաքական կամք է դրսեւորել: Եթե նույն կամքը դրսեւորի նաեւ Երեւանը, ապա, համոզված ենք, հաջողության կհասնենք»:

Եթե ամփոփենք Սինիրլիօղլուի այցի մասին վերոհիշյալ հայտարարություններն ու Էրդողանի նամակի պարզաբանումները, ապա ակնհայտ կդառնա, որ Անկարան ապրիլի 24-ի նախօրյակին այդ այցով «հայ-թուրքական արձանագրություններին հավատարիմ եւ նորմալացման գործընթացի զարգացմանը հետամուտ լինելու» ազդանշաններ է հաղորդել Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացմամբ շահագրգիռ միջազգային ուժերին:

Միաժամանակ հայտարարվել է, որ Սինիրլիօղլուի այցի արդյունքում կողմերը որոշեցին ապրիլի 12-13-ին Վաշինգտոնում հրավիրվող միջուկային անվտանգության գագաթաժողովում իրականացնել Հայաստանի նախագահի եւ Թուրքիայի վարչապետի հանդիպում: Իրականում խոսքը ոչ թե հանդիպման իրականացման, այլ դրա կազմակերպումից անմասն չմնալու մասին է, որովհետեւ գագաթաժողովին վարչապետ Էրդողանը հրավիրվել էր ամիսներ առաջ, իսկ նախագահ Սարգսյանը՝ մարտի կեսերին:

Եթե խնդիրը գագաթաժողովին Հայաստանի մասնակցությունը լիներ, ապա Վաշինգտոնը նախագահ Սարգսյանին կհրավիրեր վարչապետ Էրդողանի հետ միաժամանակ: Այլ կերպ, ՀՀ նախագահի հետ Թուրքիայի վարչապետի հանդիպումը կանխորոշված էր, իսկ դրա՝ Վաշինգտոնի նախաձեռնությամբ իրականացման հանգամանքը սահմանափակում էր հանդիպումից խուսափելու Անկարայի հնարավորությունը:

Ստեղծված իրավիճակում Անկարան հանդիպման առնչությամբ Վաշինգտոնին հակադրվելու փոխարեն որոշեց Երեւան գործուղել վարչապետ Էրդողանի հատուկ ներկայացուցչին, ցույց տալու համար միջազգային հանրությանը, թե Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման գործընթացը շարունակվում է շնորհիվ Թուրքիայի բարի կամքի, նույնիսկ լուրջ զարգացումներ են տեղի ունենում: Միաժամանակ փորձ արվեց ստուգելու՝ կվավերացվե՞ն հայ-թուրքական արձանագրությունները ՀՀ Ազգային ժողովում նախքան Սարգսյան-Էրդողան հանդիպումը:

Թերեւս այդ առումով պատահական չէր, որ թուրքական քաղաքական շրջանակները վավերացման համար արձանագրությունների ներկայացումը ՀՀ Ազգային ժողով գնահատեցին վաշինգտոնյան հանդիպման նախօրյակին Անկարային ճնշման ենթարկելու հայկական դրսեւորումը: Իսկ դրա առնչությամբ «Թարաֆ» թերթն ապրիլի 8-ի համարում գրեց. «Արձանագրությունները խորհրդարանի քննարկմանը ներկայացնելու որոշմամբ, Հայաստանը ծանր կացության մեջ դրեց Թուրքիային, որովհետեւ Սարգսյանը կարող է ԱՄՆ-ում (Վաշինգտոնում Օբամայի եւ Էրդողանի հետ) նախատեսվող եռակողմ հանդիպմանը ներկայանալ վավերացված արձանագրություններով: Իսկ դրանք խորհրդարանում վավերացնելու անկարողությունն ապրիլի 24-ի նախօրյակին կապում է Թուրքայի ձեռուտքը»:

Համենայն դեպս, ապրիլի 11-ին Թուրքիայի վարչապետը կլինի Վաշինգտոնում, որտեղ երկկողմ հանդիպում կունենա Բարաք Օբամայի հետ: ԱՄՆ նախագահը կհանդիպի նաեւ ՀՀ նախագահին, որից հետո, ինչպես թուրքական մամուլն է վկայում, նա կնախաձեռնի Սարգսյան-Էրդողան հանդիպումը: Թուրքական «Թարաֆ» եւ «Սթար» թերթերի ենթադրությամբ, ՀՀ նախագահի եւ Թուրքիայի վարչապետի հանդիպմանն արձանագրությունների վավերացման հորդորներով կմասնակցի նաեւ Բարաք Օբաման: Այսպիսով, հանդիպումը կվերածվի եռակողմի:

Սարգսյան-Էրդողան վաշինգտոնյան հանդիպումը կարեւոր է Օբամայի ապրիլի 24-ի ուղերձի բովանդակության, իսկ ուղերձը՝ Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման գործընթացի նկատմամբ Անկարայի հետագա դիրքորոշման առումով: Ինչ էլ որ լինի, Վաշինգտոնում հրավիրվող միջուկային անվտանգության գագաթաժողովի վրա իր կնիքն է թողնելու Հայաստան-Թուրքիա նորմալացման գործընթացը, եւ գագաթաժողովը մնալու է Սարգսյան-Էրդողան հանդիպման ստվերում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# Կբացվի հայ-ռուսական ինովացիոն կենտրոն

## *Հայտնի դարձավ հայ-ռուսական համագործակցության պայմանագրի ստորագրման ժամանակ*

Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի (ՀԱԱՊ) նախագահ **Մարտին Սարգսյանը** եւ Ռուսաստանի՝ ԱՊՀ, արտասահմանում բնակվող հայրենակիցների եւ միջազգային հումանիտար համագործակցության հարցերի «Ռոսսոտրուդնիչեստվո» դաշնային գործակալության Հայաստանի ներկայացուցչության ղեկավար **Վիկտոր Կրիվոպուսկովը** երեկ համագործակցության պայմանագիր ստորագրեցին, որից հետո փաստաթուղթը ներկայացրին լրագրողներին:




Մարտին Սարգսյանը, նշելով, որ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ապրանքաշրջանառությունը 2009-ին կազմել է 1 մլրդ դոլար, այն կարծիքը հայտնեց, որ կողմերի համագործակցության ներուժը դեռ լավ չի օգտագործվում: Այս համաձայնագիրը, ըստ ՀԱԱՊ նախագահի, կնպաստի առեւտրատնտեսական, գիտատեխնիկական, միջտարածաշրջանային, ինչպես նաեւ կրթական եւ մշակութային ոլորտներում համագործակցության խորացմանը: Մամուլի ասուլիսի ժամանակ Մարտին Սարգսյանը նաեւ հայտնեց, որ երկու երկրների համագործակցության շրջանակներում այս տարվա հոկտեմբերին տեղի կունենան հայ-ռուսական գործարար համաժողով եւ ռուսական ապրանքների ցուցահանդես: Նմանատիպ միջոցառում նախկինում անցկացվել է Մոսկվայում, եւ ներկայացված հայկական ապրանքները տեղում ամբողջությամբ սպառվել են:

Վիկտոր Կրիվոպուսկովն այն կարծիքը հայտնեց, որ Ռուսաստանը Հայաստանի համար կարեւոր նշանակություն ունի, այնպես, ինչպես Հայաստանը Ռուսաստանի համար: Փաստելով, որ ռուսական կապիտալն ամենամեծ ներկայացվածությունն ունի Հայաստանում, նա նշեց, որ դրանում իր դերն ունի նաեւ Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատը: Վիկտոր Կրիվոպուսկովը տեղեկացրեց նաեւ, որ այս տարվա ապրիլի 15-ին Հայաստանում կբացվի հայ-ռուսական ինովացիոն կենտրոնը: Իրականացվելու են նաեւ այլ ծրագրեր՝ մասնավորապես համագործակցություն Հայաստանի մարզերի եւ Ռուսաստանի նահանգների միջեւ, Մոսկվայի պետական համալսարանի եւ Պլեխանովի անվան ինստիտուտի մասնաճյուղերի բացում Երեւանում, «Հայաստանի էլեկտրական ցանցերն» ու «Հարավկովկասյան երկաթուղին» իրենց համար կադրերի պատրաստման նպատակով կհամագործակցեն Երեւանի պետական համալսարանի եւ Երեւանի ճարտարապետա-շինարարական համալսարանի հետ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# «Քրոջս ու նրա աղջկան մերկացրին, բենզին լցրեցին ու վառեցին»

*1-ին էջից*

**Սարգսյան Կարինեն պատմում էր, որ Մարաղայի ուղղությամբ առաջին կրակոցները սկսվել էին հունվարին: «Ապրիլին այդ կրակոցները շատացան, ու մենք թաքնվեցինք նկուղում: Մի քանի օր անց տեսանք, որ ադրբեջանցիները գյուղում են: Ես լսում էի, թե ինչպես էր մի կին աղաչում, որ իր երեխաներին ձեռք չտան: Նրա գլխին հարվածեցին, եւ նա ուշագնաց ընկավ: Հետո ես իմացա նրա անունը՝ Զաբել: Պարզվեց, որ երեխաների աչքի առաջ մայրը սպանվել է տանկի անիվների տակ: Նրանք իմ երեխաներին էլ գողացան, ես կորցրեցի ու էլ նրանց չտեսա: Ինձ գցեցին «Ժիգուլի» մեքենայի մեջ ու տարան Բարդա: Զարթնեցի Բարդայի ոստիկանության շենքում... Էլ ոչինչ չեմ հիշում, հիշում եմ մարդկանց լացը, շատերը խելագարությունից ոռնում էին»:**

**«Քրոջս ու նրա աղջկան մերկացրին, բենզին լցրեցին ու վառեցին: Նույն կերպ սպանեցին Փառանձեմին, Վարդանուշին, Բագրատին, Ժորային: Այդ օրը Մարաղայում բազմաթիվ անմեղ մարդիկ մահացան», հիշում էր Նուշիկ Աղաջանյանը:**

**«Երբեք չեմ մոռանա այն ահավոր օրը, երբ ադրբեջանցիները հարձակվեցին Մարաղայի վրա: Բնակիչներն անպաշտպան էին, նրանք գրեթե ոչինչ չունեին թշնամուն դիմակայելու համար: Տեսա երիտասարդ տղայի, որ փորձում էր ադրբեջանցիների տանկի դեմն առնել որսորդական հրացանի օգնությամբ: Տեսել եմ, թե ինչպես են ադրբեջանցիները գլխատում մարդկանց, տեսել եմ վառված դիակներ: Շատերին նրանք կենդանի վառել էին: Նրանք նախ թալանում էին հայերի տները, հետո հիմնահատակ քանդում ու վառում»:**

**Սրանք էլ Քվինսբուրգի բարոնուհի Քերոլայն Քոքսի հիշողություններն են:**

**Ողբերգությունից անցել է 18 տարի, սակայն միջազգային հանրությունը Մարաղայի, Բաքվի, Սումգայիթի ջարդերի վերաբերյալ համարժեք գնահատական չի տվել:**

**Մինչդեռ ադրբեջանական կողմը, հավատարիմ մնալով իր ցեղասպանի ձեռագրին, Մարաղայի կոտորածը իրագործելու համար «Ադրբեջանի ազգային հերոս» կոչում շնորհեց «Գուրթուլուշ» զինվորական ստորաբաժանման հրամանատար Շահին Թալիբօղլի Թագինին:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW PDF.qxd 09/04/2010 22:57 Page 1



# Անշարժ գույքի գների մինչեւ 1 տոկոս աճ փետրվարին

## *Կտրուկ աճել են հիպոթեկային գրավադրման գործարքները*

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի` շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2010-ի փետրվարին Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 13417 գործարք, ինչը 65 տոկոսով բարձր է նախորդ ամսվա` հունվարի եւ 30,4 տոկոսով` 2009-ի փետրվարի գործարքների համեմատ: Միայն օտարման գործարքների քանակը փետրվարին հունվարի համեմատ աճել է 36,2 տոկոսով, իսկ անցյալ տարվա փետրվարի համեմատ` 20,6 տոկոսով: 3319 օտարման գործարքներից առուվաճառքներինը կազմել է 79,6 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35,2 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում:

Մայրաքաղաքում առուվաճառքի գործարքների 67,9 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2010-ի հունվարի համեմատ, բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում փետրվարին աճել է 58 տոկոսով, իսկ նախորդ տարվա փետրվարի համեմատ` 44,3 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա փետրվարին հունվարի համեմատ աճել են` 0,2 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ /դրամ/ | Միջին գները | | |
|---|---|---|---|
| | փետրվար 2009թ. | փետրվար 2010թ. | հունվար 2010թ. |
| Կենտրոն | 482300 | 469200 | 473300 |
| Արաբկիր | 344400 | 370800 | 370800 |
| Քանաքեռ-Զեյթուն | 270200 | 281200 | 283300 |
| Նոր Նորք | 241200 | 234400 | 232400 |
| Ավան | 241800 | 235700 | 232800 |
| Էրեբունի | 256600 | 246500 | 246200 |
| Շենգավիթ | 237300 | 247300 | 247700 |
| Դավթաշեն | 268400 | 269000 | 267800 |
| Աջափնյակ | 238700 | 240500 | 237000 |
| Մալաթիա-Սեբաստիա | 230600 | 235000 | 234700 |
| Նուբարաշեն | 148000 | 143500 | 142200 |
| Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/ | 269000 | 270300 | 269800 |

Մարզերում, բացառությամբ Երեւանի, փետրվարին վաճառվել են 307 բնակարաններ, որոնց քանակը հունվարի համեմատ աճել է 44,8 տոկոսով, իսկ 2009-ի փետրվարի համեմատ` 19,5 տոկոսով: Միաժամանակ, բնակարանների միջին գները հունվարի համեմատ աճել են նույնպես 0,2 տոկոսով:

Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները հունվարին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 181 հազար դրամ: Աբովյանում 1 քմ գինը 160 հազար հազար դրամ է կազմել, Վաղարշապատում (Էջմիածնում)` 155 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը` 142 հազար դրամ, Իջեւանը ` 138 հազար դրամ, Գորիսը` 137 հազար դրամ, Մասիսը` 125 հազար դրամ 1 քմ-ի դիմաց ցուցանիշներով:

2010-ի փետրվարին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 371 գործարք, որից 74-ը` Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը 2010-ի հունվարի համեմատ նվազել է 5,1 տոկոսով, իսկ մարզերում աճել` 34,4 տոկոսով: 2009-ի փետրվարի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը Երևանում աճել է 13,8 տոկոսով, իսկ մարզերում` միասին վերցրած, 24,3 տոկոսով: Միջինացված` 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2010-ի փետրվարին հունվարի համեմատ աճել են 0,9 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ /դրամ/ | Միջին գները | | |
|---|---|---|---|
| | փետրվար 2009թ. | փետրվար 2010թ. | դեկտեմբեր 2009թ. |
| Կենտրոն | 492000 | 485300 | 481100 |
| Արաբկիր | 400700 | 379400 | 376900 |
| Քանաքեռ Զեյթուն | 304900 | 288700 | 286700 |
| Նորք-Մարաշ | 299100 | 284500 | 283200 |
| Ավան | 277200 | 238500 | 236400 |
| Էրեբունի | 283500 | 251700 | 249800 |
| Շենգավիթ | 276700 | 251500 | 249800 |
| Դավթաշեն | 310000 | 277500 | 273900 |
| Աջափնյակ | 275700 | 243800 | 240700 |
| Մալաթիա-Սեբաստիա | 272000 | 242300 | 239500 |
| Նուբարաշեն | 162800 | 147500 | 146400 |
| Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/ | 305000 | 281000 | 278600 |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները փետրվարին հունվարի համեմատ աճել են 1 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո դարձյալ Ծաղկաձորում են, 1 քմ-ն` 305 հազար դրամ: Երկրորդը Վաղարշապատն է, 1 քմ-ն` 166 հազար դրամ, երրորդը` Աբովյանը, որտեղ 1 քմ-ն կազմել է 165 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը 146 հազար դրամ, Գորիսը 143 հազար դրամ, Իջեւանը` 141 հազար դրամ, Նոր Հաճընը` 134 հազար դրամ, Եղվարդը` 128 հազար դրամ 1 քմ-ի դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է` 2010-ի փետրվարին 2009-ի փետրվարի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 41,9 տոկոսով, աճուրդով վաճառքներինը` 2,1 անգամ:

2010-ի փետրվարին, 2010-ի հունվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 64 տոկոսով, իսկ 2009-ի փետրվարի համեմատ նվազել` 14,1 տոկոսով:

Իրականացվել են հիպոթեկային գրավադրման 107 գործարքներ, որից 79` Երեւանում: Հիպոթեկային գրավադրման գործարքներից 81,3 տոկոսն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 15 տոկոսը` անհատական բնակելի տների, մնացածը հասարակական նշանակության օբյեկտների, այգետնակների եւ հողերի նկատմամբ: 2010-ի հունվարի համեմատ, հիպոթեկային գրավադրման գործարքների քանակն աճել է 2,3 անգամ, Երեւանում` 2,8 անգամ, իսկ մարզերում` 47,4 տոկոսով: 2009-ի փետրվարի համեմատ, հիպոթեկային գրավադրման գործարքների քանակն աճել է 2,7 անգամ, Երևանում` 3 անգամ, մարզերում` 2,1 անգամ:

Այսպիսով, 2010-ի փետրվարին եւս պահպանվել է անշարժ գույքի գների կայունացման ու վերջին ամիսներին ամսական արձանագրվող փոքր աճը: Այս միտումը, ամենայն հավանականությամբ, կշարունակվի նաեւ առաջիկա ամիսներին: Միաժամանակ, հարկ է ընդգծել ընդհանուր գործարքների թվի զգալի աճը եւ հիպոթեկային վարկավորման գործարքների կտրուկ` անգամներով արտահայտվող աճը:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Երբ կանգնեցնում է ավտոտեսուչը

Հայաստանյան անկանոն երթեւեկությունը կարծես մեր իրականության անբաժան մասն է դարձել: Ինչո՞ւ անկանոն, որովհետեւ նույնիսկ մայրաքաղաքի պետավտոտեսուչներից ոմանք չգիտեն երթեւեկության կանոնները կամ գիտեն, բայց թերանում են այդ մասին տեղյակ պահել վարորդներին: Վերջիններս, արդարության համար նկատենք, նույնպես այնքան էլ ծանոթ չեն երթեւեկելու կանոններին: Ահա այսպես կանգնում ենք իրավիճակի առջեւ, երբ շատ հաճախ ոչ խախտողը գիտի, թե ինչ է խախտել, ոչ արձանագրողը գիտի` ինչ խախտում է արձանագրում, այնինչ այս երկուսի իրազեկ լինելուց կախված են հարյուրավոր, հազարավոր մարդկային կյանքեր:

Վերջին ժամանակներում ճանապարհային ոստիկանությունը որոշ միջոցառումներ ձեռնարկեց` ամրագոտիների, ճանապարհները միայն լուսացույցների տակ եւ հատուկ տեղերով անցնելու վերաբերյալ, որով, երբեմն փոփոխություններ եղան: Զեւական, քանի որ բոլորս գիտենք, վարորդներից շատերն ամրագոտին ոչ թե կապում են, այլ «գցում են վրան», բոլորս գիտենք, որ շտապող հետիոտնը ճանապարհն անցնելու համար որոնում է ոչ թե փողոցի «գծված մասը», այլ` ոստիկանական մեքենան, իսկ վերջինիս չլինելու դեպքում հանգիստ անցնում է փողոցը որտեղից սիրտն ուզի: Ահա, այսպիսի երթեւեկ ունենք, իսկ եթե գումարենք նաեւ ավտոտեսուչների հանած պետհամարանիշներով մեքենաները, ցերեկային ժամերին չերեւացող լուսացույցները, հետիոտնի համար նախատեսված` թույլ տեսանելի սպիտակ գծերը, ապա պարզ է դառնում, թե ինչու վերջին տարիներին ճանապարհային պատահարներից ունենք այսքան շատ զոհեր:

Փորձելով գոնե որոշակիորեն փոխել ստեղծված վիճակը` մենք որոշեցինք հիշեցնել վարորդներին ու մանավանդ ավտոտեսուչներին վերջիններիս որոշ պարտականությունների մասին:

Նախ` տեսուչը պարտավոր է ծառայության վայրն ընտրել այնպես, որ ինքը տեսանելի լինի երթեւեկության բոլոր մասնակիցներին: Սակայն, թե որտեղի՞ց են հայաստանյան ճանապարհների վրա հաճախ «առաջանում» ոստիկանական մեքենաները, դրանով իսկ, փաստորեն, խախտելով իրենց իսկ պարտականությունը, հայտնի չէ: Այնուհետեւ, «պարզվում» է, որ տեսուչն իրավունք ունի մեքենան կանգնեցնելու միայն բացահայտ խախտման դեպքում, երբ.

ա) ակնհայտ է, որ վարորդը խախտել է երթեւեկության կանոնները,

բ) մեքենայի ընթացքը, դրանում տեղափոխվող բեռը, կամ վարորդը, ուղեւորները, իրենց վարքագծով վտանգ են ստեղծում երթեւեկության համար,

գ) բավարար հիմքեր կան կասկածելու, որ մեքենան կամ ներսում գտնվող անձինք գտնվում են հետախուզման մեջ,

դ) անհրաժեշտություն կա տեղեկացնելու վարորդներին ճանապարհին առաջացած վտանգների մասին,

ե) ՀՀ ոստիկանապետի, նրան փոխարինող անձի կողմից հատուկ միջոցառումներ իրականացնելիս:

Տեսուչը մեքենան կանգնեցնելու ազդանշանը այնպես եւ այնտեղ պետք է տա, որ չառաջացնի վթարային իրավիճակ: Այնինչ մայրաքաղաքի շատ խաչմերուկներում առանց այդ ազդանշանների էլ վթարային իրավիճակ է:

Երբ տեսուչը կանգնեցնում է մեքենան, վարորդի դուրս գալը նա-



խատեսված չէ: Տեսուչն ինքը պետք է մոտենա մեքենային, ներկայանա, վարորդի պահանջով ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ, իսկ վարորդն էլ պարտավոր է ներկայացնել իրենից պահանջվող բոլոր փաստաթղթերը: Եթե վարորդը գտնում է, որ ինքը որեւէ խախտում չի կատարել, իսկ տեսուչը, այնուամենայնիվ, կազմում է խախտման արձանագրություն, ապա վարորդը, արձանագրությանը մանրամասն ծանոթանալուց հետո, կարող է հատուկ սահմանված տեղում նշել, որ ինքը համաձայն չէ ձեւակերպումներին, որից հետո պետք է ստորագրի արձանագրությունը: Այնուհետեւ վարորդն իրավունք ունի իրեն տույժի ենթարկելու որոշումը բողոքարկելու մինչեւ դատարան: Այս առումով վարորդների իրավունքների պաշտպան «Աքիլլես» ՀԿ-ի նախագահ **Էդուարդ Հովհաննիսյանը** խորհուրդ է տալիս վարորդներին խախտման արձանագրության մեջ անպայման նշել որոշ մանրամասնություններ, օրինակ` թույլ տեսանելի, իսկ հաճախ էլ` առհասարակ փչացած լուսացույցներ եւ այլն, բացի սրանից պետք է անպայման ձայնագրել տեսուչի հետ ունեցած ամբողջ խոսակցությունը: Ի դեպ, ձայնագրության մասին: Ճանապարհային ոստիկաններին տրված են տեսախցիկներ, որոնցով նրանք պարտավոր են նկարահանել խախտումը, սակայն հաճախ տեսախցիկը ոչինչ նկարահանած չի լինում. տրամաբանական հարց` այդ դեպքում ինչո՞ւ են տեսախցիկները տրվում ոստիկաններին: Բացի սրանից, տեսուչներին տրված է նաեւ մեքենաների արագության չափման «Իսկրա-1», «Իսկրա-1Բ» եւ «Իսկրա-1Դ» սարքերը: Սրանցով ոստիկանը չափում է արագությունը եւ սահմանվածից բարձր լինելու դեպքում արձանագրում խախտում: Իսկ ինչպե՞ս պետք է վարվի վարորդը, երբ տեսուչը նրան կանգնեցրել է բարձր արագության համար, որին ինքը համաձայն չէ: Մեքենան կանգնեցնելուց անմիջապես հետո, նա պետք է մոտենա տեսուչի մեքենային եւ համոզվի, որ սարքի վայրկյանացույցը աշխատում է: Եթե չի աշխատում, ապա համոզված եղեք, որ արագության տվյալները չեն վերաբերում ձեր մեքենային, հետեւաբար խախտումը դուք չեք արել: Այնուհետեւ վարորդը պետք է պահանջի արագաչափի սերտիֆիկատը եւ համոզվի, որ հերթական արագաչափման ժամկետը (տարին մեկ անգամ) չի անցել: Սրանից հետո վարորդը պետք է պահանջի, որ իրեն ցուցադրեն խախտման տեսագրությունը, առհասարակ արագաչափի ցուցմունքներն ու տեսագրությունը վարորդի կողմից խախտման միակ ապացույցն են, իսկ սրանցից որեւէ մեկի չլինելու, կամ թերի լինելու դեպքում փաստորեն «թերի» է նաեւ խախտումը, հետեւաբար տեսուչի կողմից մեքենայի կանգնեցումը անհիմն է: Ի դեպ, «պարզվում» է, որոշ մեքենաներ ունեն վկայականներ, որոնց հիման վրա տեսուչն իրավունք չունի նրանց կանգնեցնել: Թե ի՞նչ վկայականներ են դրանք, որոնք ունեն հիմնականում «գողհամարատերերը», չգիտենք, միայն գիտենք, որ երբ ճանապարհային պատահարի ժամանակ հավասարաչափ մեղավոր են «գողհամարատերն» ու շարքային վարորդը, ապա վերջինիս է միայն կանգնեցնում տեսուչը: Իսկ, երբ վրդովված վարորդը հարցնում է` ինչո՞ւ «այն մյուսին» էլ չկանգնեցրիր, ստանում է պատասխան` «Ես չե՞մ տեսուչը, ում ուզեմ, նրան էլ կկանգնեցնեմ»: Մինչդեռ տեսուչը պետք է կանգնեցնի խախտողներին եւ հիմնավորի դրա պատճառները փաստերով: Այս երկու բնական երեւույթները մեր երկրում դեռեւս արմատավորված չեն, դեռեւս:

**ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ**

AZG NEW PDF.qxd 09/04/2010 22:57 Page 1



# Իլհամ Ալիեւը նո՞ր է ավարտել ադրբեջանական դպրոցը

«Ադրբեջանում պատմությունը կեղծվում է խայտառակ կերպով, դպրոցականներն իրենց երկրի «կեղծված պատմությանն են ծանոթանում»: Ուսումնասիրելով ԱՊՀ երկրներում պատմության «վիճակը»՝ նման եզրակացության են եկել ռուս գիտնական-պատմաբանները, մինչդեռ Հայաստանում ու Բելառուսում վերոհիշյալ գիտնականները պատմության որեւէ կեղծիք չեն հայտնաբերել: Բայց որ Ադրբեջանում կեղծվում է ոչ միայն պատմությունը, այլեւ ներկան, ֆչերն են խոստովանում. պարզվում է, որ ղարաբաղյան բանակցություններում ամենեւին էլ չի քննարկվում Ղարաբաղի անկախության հարցը: Այս մասին հայտարարել է **Իլհամ Ալիեւը**՝ ելույթ ունենալով Էստոնիայի արտաքին գործերի նախարարությունում: Ալիեւ որդին դժգոհություն է հայտնել, որ «չնայած ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 4 բանաձեւերին, Հայաստանը չի հանում իր զինուժը մեր օկուպացված հողերից: Սա նշանակում է, որ միջազգային իրավունքը չի գործում: Իսկ այդ նորմերը արհամարհող ագրեսորը միջազգայնորեն չի պատժվում: Ադրբեջանական հողերի օկուպացիային պետք է վերջ տրվի, այն մարդիկ, որոնք ապրում են այսօր Ղարաբաղում, պետք է այնտեղ ապրեն ադրբեջանցի փախստականների հետ՝ Ադրբեջանի իրավասության տակ, ստանալով լայն ինքնավարություն, ինչպես ընդունված է ժամանակակից աշխարհում: Իսկ այսօր բանակցություններում մենք չենք քննարկում Ղարաբաղի անկախության հարցը, դա անհնար է», հայտարարել է Ալիեւը:

Նախ, բացի նրանից, որ ՄԱԿ-ն ընդունած ունի երկրների տարածքային ամբողջականությունը հարգող բանաձեւեր, ունի նաեւ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ընդունող բանաձեւեր, որոնք, ի դեպ, ստորագրել է նաեւ Ադրբեջանը: Այնպես որ, նախագահի մակարդակով հայտարարել, թե «հայկական զինուժի առկայությունը Ղարաբաղում խախտում է միջազգային իրավունքը», մեղմ ասած, նշանակում է կամ հարցի, կամ նույն միջազգային իրավունքի չիմացություն. ինչո՞ւ, օրինակ, Ալիեւ կրտսերը համարձակություն չունի հայտարարելու, որ ռուսները խախտում են միջազգային իրավունքը Աբխազիայում եւ Հարավային Օսիայում: Ինչ վերաբերում է «ժամանակակից աշխարհում ընդունված լայն ինքնավարությանը», այն երկրները, որոնք ունեն լայն ինքնավարություններ, իրենց երկրում ինքնավարության քաղաքացիներին չեն ներկայացնում հանցագործ-մարդասպան-ոխերիմ թշնամիներ, չեն հայտարարում, որ պատրաստ են պատերազմելու նրանց դեմ: Եթե մի պահ հավատանք ադրբեջանական պատմության դասագրքին եւ ընդունենք, որ Ղարաբաղը ադրբեջանական տարածք է, ապա Ալիեւն, ի՞նչ է, սեփական քաղաքացիների դե՞մ է պատերազմ սկսելու հայտարարություններ անում, սա չի՞ պատասխանում արդյոք այն հարցին, թե հայ-ադրբեջանական հակամարտությունում ագրեսորն ով է:

Իլհամ Ալիեւի հետագա հայտարարությունները վկայում են, որ Ադրբեջանի «արքան» այնքան էլ տեղյակ չէ ոչ միայն միջազգային իրավունքին, ժամանակակից ինքավարություններին, այլեւ սեփական երկրի պատմությանը. «1918-ին Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունը որոշում կայացրեց հանձնել հայերին Էրիվանը որպես մայրաքաղաք: Էրիվանը ադրբեջանական Էրիվանի խանության կենտրոնն էր: Սա նշանակում է, որ հայերն արդեն կառուցել են իրենց պետությունը ադրբեջանական հողերում, եւ մենք չենք կարող թույլ տալ, որ հայերը երկրորդ պետությունը կառուցեն Ադրբեջանի տարածքում: Որքան շուտ հայերը սա հասկանան, այնքան շուտ Կովկասում կհաստատվի խաղաղություն, քանի որ առանց ղարաբաղյան հակամարտության լուծման հնարավոր չէ տարածաշրջանում իրականացնել այլ ծրագրեր կամ քաղաքական նախաձեռնություններ: Սա անհնար է», հայտարարել է Ալիեւը: Անկեղծ ասած, շատ ավելի ճիշտ կլիներ, որ այս հայտարարությանը պատասխաներ Իրանը՝ այն էլ պետական մակարդակով: 1918-ին Արեւելյան Հայաստանում չկար որեւէ ադրբեջանական խանություն, այս վերջինը հայկական բնիկ տարածքներում չի եղել երբեք: Եղել են իրանական (պարսկական) խանություններ, որոնցից էլ ցարական Ռուսաստանի զորքերի օգնությամբ ազատագրվել է Արեւելյան Հայաստանը: Այնպես որ, նույն իրանական ազգությունների խառնուրդից, իրանական խանությունների հիման վրա կառուցված Ադրբեջանական դեմոկրատական հանրապետության իրավահաջորդ ներկայիս Ադրբեջանի կողմից հնչող նման հայտարարություններին պետք է արժանի գնահատական տրվի, Ալիեւի ասած՝ «միջազգայնորեն»:

Հիմա մեկ այլ զավեշտի մասին. «Ազգերի ինքնորոշումն, անշուշտ, կարեւոր նորմ է միջազգային իրավունքի տեսակետից, սակայն չէ՞ որ հայերն արդեն ինքնորոշվել են, իսկ մենք չենք կարող թույլ տալ, որ նրանք երկրորդ անգամ ինքնորոշվեն մեր հողերում: Այսօր աշխարհի բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Մինսկի խմբի համանախագահների երկրներում, ապրում են բազմաթիվ հայեր, ի՞նչ կասեն այդ երկրները, եթե հայերն իրենց երկրներում հանկարծ որոշեն ինքնորոշվել: Որքա՞ն կարող են առաջանալ հայկական պետությունները: Կրկնում եմ՝ հայերն արդեն ինքնորոշվել են, ընդ որում մեր՝ ադրբեջանական տարածքներում, սա բոլորը գիտեն», բոլորի անունից հանդես է եկել Ադրբեջանի նախագահը: Իլհամ Ալիեւը թերեւս չգիտի, որ իր սիրած ժամանակակից աշխարհում կան Հյուսիսային եւ Հարավային Կորեաներ, իսկայական արաբական աշխարհ, կային երկու Գերմանիաներ եւ, ամենակարեւորը, կա թյուրքական պետությունների շղթան, որոնցից մեկի ղեկավարն էլ հենց խոսում է մեկ ազգի երկու պետություն ունենալու անհնարինության մասին՝ մասնակցելով, սակայն, «մեկ ազգ՝ երկու-յոթ-ութ» պետություններ «մեկազգային» բազմաթիվ ֆորումներին:

Սեփական երկրի պատմության «լավ իմացությունը», միջազգային դրությանը, իրավիճակին, իրավական նորմերին քաղաքական քարտեզին «քաջատեղյակությունը» հիմք է տալիս կարծելու, որ Իլհամ Ալիեւը նոր է ավարտել ադրբեջանական դպրոցը, որտեղ «Էրիվանն ադրբեջանական քաղաք է»:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Ղրղզստանին օգնելու առաջարկներ ՌԴ-ից, ԵՄ-ից, ՄԱԿ-ից

## *Ղրղզական պատվիրակություն Մոսկվայում*

Եվրոմիությունն օգնություն է առաջարկել Ղրղզստանին, որտեղ չորեքշաբթի օրը ընդդիմության սկսած բողոքի հուժկու ելույթներն ավարտվեցին պետական հեղաշրջմամբ: Օգնելու առաջարկությամբ հանդես է եկել ԵՄ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Քեթրին Էշտոնը:

Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ Ղրղզստանին օգնելու պատրաստակամություն է հայտնել նաեւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը: Մամլո ասուլիսում նա հայտարարել է, որ այդ երկիր կգործուղի հատուկ հանձնարարությունների դեսպան Յան Կուբիշին: Վերջինս Ղրղզստանում եղել էր 2005-ին, երբ երկրում տեղի էր ունեցել այսպես կոչված «վարդակակաչների հեղափոխություն»:

ԵՄ-ից եւ ՄԱԿ-ից առաջ՝ ապրիլի 8-ին ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը խոստացել էր մարդասիրական օգնություն հատկացնել Ղրղզստանի բնակչությանը: Նա ժամանակավոր կառավարության ղեկավար Ռոզա Օթունբաեւային կոչ էր արել ապահովել հանրապետության բնակիչների անվտանգությունը:

Ղրղզստանի ժամանակավոր կառավարության աղբյուր վկայակոչելով՝ Ինտերֆաքս գործակալությունը հաղորդում է, որ ապրիլի 9-ին կառավարական մի պատվիրակություն Մոսկվա է թռել բանակցելու: Սակայն չի նշվում, թե Մոսկվայում ինչ մակարդակի հանդիպումներ են նախատեսված:

Պատվիրակությունը գլխավորում է ժամանակավոր կառավարության ղեկավարի տնտեսական հարցերի գծով տեղակալ Ալմազբեկ Աթամբաեւը: Բացառված չէ, որ պատվիրակությունը տնտեսական օգնություն կխնդրի Ռուսաստանից, նշել է կառավարության աղբյուրը:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա այդ երկիրը Ղրղզստանի նոր իշխանությանը համարում է «միջանկ վարչակազմ» եւ չի շտապում պաշտոնապես ճանաչել նրան: Պետքարտուղարի Հարավային եւ Կենտրոնական Ասիայի գործերի գծով օգնական **Ռոբերտ Բլեյքը** դա հաստատել է BBC-ին տված հարցազրույցում, ընդգծելով, որ Վաշինգտոնը ճանաչում է պետություններ եւ ոչ թե կառավարություններ:

Այդուհանդերձ Բլեյքը փաստորեն ընդունել է նոր իշխանության գոյությունը: Նրա խոսքերով, ԱՄՆ-ի համար կարեւոր չափանիշներ են «բռնությունից հրաժարումը, հաշտության եւ կարգուկանոնի արագ վերականգնումը, ինչպես նաեւ ժողովրդավարությունը»: Ըստ Բլեյքի, «առկա է այն տպավորությունը, որ ներկայիս կառավարությունը, ըստ երեւույթին, իրոք շարժվում է դրական ուղղությամբ»:

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՈՒՄ

# Օբաման միջուկային զինաթափման կոչ է անում

Երեկ «**Ազգը**» հաղորդեց Պրահայում ապրիլի 8-ին Ռազմավարական հարձակողական սպառազինությունների (ՌՀՍ) սահմանափակման ռուս-ամերիկյան նոր պայմանագրի ստորագրման մասին: Նախագահներ Դմիտրի Մեդվեդեւը եւ Բարաք Օբաման ստորագրման արարողությունից հետո անցկացրել են համատեղ մամլո ասուլիս: ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ ասուլիսում ելույթ ունենալով՝ Օբաման միջուկային զենք ունեցող բոլոր երկրներին կոչ է արել մտածել զինանոցների կրճատման մասին:

Օբաման պարզաբանել է, որ ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը ստիպված կլինեն պահպանել իրենց միջուկային ներուժը, քանի դեռ մյուս տերություններն ունեն միջուկային զենք:

Երկու նախագահների ստորագրած ՌՀՍ սահմանափակման պայմանագիրն այդ կարգի երրորդ փաստաթուղթն է եւ կոչված է փոխարինելու ԽՍՀՄ-ի եւ ԱՄՆ-ի կնքած եկկողմ համաձայնագրին, որի ժամկետն ավարտվեց 2009-ի դեկտեմբերին:

Նոր պայմանագրի համաձայն, ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը 7 տարում պետք է ռազմավարական զինանոցները կրճատեն 30 տոկոսով: Կողմերից յուրաքանչյուրը կունենա 1550 մարտագլխիկ, որը բավական է հակամարտության դեպքում փոխադարձ միջուկային ոչնչացման համար:

# Polaroid-ի նախկին տերը դատապարտվեց 50 տարվա բանտարկության

Ամերիկացի գործարար Թոմ Պետերսը՝ Polaroid ընկերության նախկին սեփականատերը, երեկ 50 տարվա բանտարկության է դատապարտվել ֆինանսական բուրգի կազմակերպման մեղադրանքով: BBC-ն հիշեցնում է, որ 2009-ի դեկտեմբերին Պետերսն արդեն մեղավոր էր ճանաչվել խարդախության եւ դրամական միջոցների լվացման առանձին դեպքերի մեջ: Այժմ հայտնի է, որ ձեռնակատիրոջ ֆինանսական բուրգի մեջ ներդրվել է 3,65 մլրդ դոլար:



Դատավորը հայտարարել է, որ ինքը վստահ չէ, թե ժամկետից շուտ բանտից դուրս գալու դեպքում Պետերսը վերստին չի զբաղվի խարդախությամբ:

Ֆրանսպրեսը պարզաբանում է, որ 1994-ին Պետերսի հիմնած Petters Company-ի ակտիվները ծախսվել են հանցակիցների պարգեւատրման եւ հաջողակ ձեռնարկության երեւութականության պահպանման նպատակներով: Նույն նպատակներով ձեռք բերվեցին Polaroid, Fingerhut եւ Sun Country Airlines ընկերությունները:

2008-ի դեկտեմբերին Polaroid-ը իրեն սնանկ հայտարարեց: Դրանից մեկ ամիս առաջ սնանկացել էր Petters Group Worlwide ընկերությունը, որը Polaroid-ի սեփականատերն էր 2005-ից:

# Ավստրիացիների 54 տոկոսը իսլամի մեջ վտանգ է տեսնում

Ավստրիացիների 54 տոկոսը իսլամի մեջ իրեն սպառնացող վտանգ է տեսնում, երկրի բնակչության գրեթե երեք քառորդը չի հավատում ավստրիական հասարակության մեջ մահմեդականների ինտեգրման հնարավորությանը: Սրանք են Ավստրիայի հանրային կարծիքի ինստիտուտի (IMAS) անցկացրած հարցման արդյունքները:

Քաթարի «Գալֆ թայմս» թերթի հրապարակումը վկայակոչելով՝ Ինտերֆաքս գործակալությունը հաղորդում է, որ ավստրիացիների 71 տոկոսն իսլամը անհամատեղելի է համարում ժողովրդավարության, ազատության եւ հանդուրժողականության արեւմտյան ընկալումների հետ:

Հարցումն անցկացվել է Ավստրիայում ապրիլի 25-ին նախատեսված նախագահական ընտրություններից առաջ: Ներկայիս նախագահ, սոցիալ-դեմոկրատ Հայնց Ֆիշերի մրցակից երկու թեկնածուները թշնամաբար են տրամադրված ներգաղթյալների հանդեպ: Այդ թեկնածուներից մեկը ծայրահեղ աջերի ներկայացուցիչ Բարբարա Ռոզենկրանցն է, մյուսը՝ Քրիստոնեական կուսակցության առաջնորդ Ռուդոլֆ Գյորինգը: Վերջինս հանդես է գալիս երկրում նոր մինարեթների շինարարության դեմ:

# ՉԺՀ-ում մահապատժի ենթարկվեցին ճապոնացի թմրավաճառներ

Ապրիլի 9-ին ՉԺՀ-ում մահապատժի են ենթարկվել Ճապոնիայի 3 քաղաքացիներ, որոնց ավելի վաղ ներկայացվել էր թմրադեղերի մաքսանենգության մեղադրանք:

Ֆրանսպրեսը նշում է երեք ճապոնացիների անունները. Տերուո Տակեդա, Հիրոնորի Ուկաի եւ Կացուո Մորի: Հրապարակվում են նրանցից երկուսի տարիքը եւ ձերբակալման թվականը: 48-ամյա Ուկաին ձերբակալվել էր 2003-ի սեպտեմբերին, Դալյան քաղաքի օդանավակայանում: Նրա մոտ հայտնաբերվել էր 1,5 կգ թմրանյութ: Դրանից մի քանի ամիս առաջ ձերբակալվել էր 67-ամյա Մորին, որի մոտ հայտնաբերվել էր 1,25 կգ թմրանյութ:

Ապրիլի 6-ին ՉԺՀ-ում մահապատժի էր ենթարկվել 65-ամյա ճապոնացի Միցունոբու Ականոն: 2006-ին նրան ձերբակալել էին 2,5 կգ թմրադեղ Ճապոնիա տանելու փորձ կատարելիս: Ֆրանսպրեսը ընդգծում է, որ նա ՉԺՀ-ում մահապատժի ենթարկված առաջին ճապոնացին է 1992 թ. երկկողմ դիվանագիտական հարաբերությունների վերահաստատումից ի վեր:

# «Հայ Սուպերսթար-4». ուրշ մտքեր տոնական համերգի գիշերը

«Հենց նոր (ապրիլի 7-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացած «Հայ Սուպերսթար» նախագծի շրջանակներում տոնական համերգի՝ Գ. Խ.), ընդմիջման ժամանակ լսեցի, թե ինչպես պատկառելի մի տիկին ասաց. «Չէ՛, ինչ ուզում են ասեն, այդ ռոք կոչվածը մեզ, հայերիս համար չէ՛»... Դե, ի՞նչ ասեմ...», բացականչեց բեմ բարձրացած նախագծի ժյուրիի անդամ Եգոր Գլումովը (Գոռ Գրիգորյան՝ խմբ), վրդովված շարունակելով. «Ես ինչ-որ չեմ լսել, ասենք, «Ջազն օգնում է Հայաստանին», կամ... «Ռաբիզը օգնում է Հայաստանին», կամ, ասենք... «Փղերը օգնում են Հայաստանին» անունը կրող ծրագրերի մասին», ամենայն հավանականությամբ նկատի ունենալով վերջերս մեզանում արդեն, ըստ էության, անընդհատ հիշատակվող «Ռոքն օգնում է Հայաստանին» նախագիծը, որը, սկիզբ առնելով ավերիչ երկրաշարժից հետո (1990 թ.), կարծես մի նոր թափ է ստանում:

Խորհրդանշական է, որ **«Շանթ»** հեռուստաընկերության միանշանակորեն հաջողված **«Հայ Սուպերսթար»** նախագծի շնորհիվ, չափազանցություն չէր լինի ասել, Հայաստանում 70-80-ական թվականներին շատ «Հայ Սուպերսթար»-ի, ինչպես նաեւ՝ թող թույլ տա պահանջկոտ հայ հանդիսատեսն ինձ անել այսպիսի համեմատություն՝ այլ աշխարհի մեծագույն «սուպերսթարների»՝ «Jethro Tull», «Uriah Heep», Իէն Գիլան համերգների ժամանակ «անծանոթ, օտար դեմքերը» չկան կամ՝ գրեթե չկան: Ճիշտ հակառակը՝ տեսնում ես բանական, պայծառ, խանդավառված «հարազատ դեմքեր», որոնցից «...պատարկվել են փողոցները» (էլի՛ Մեսչյան, դե՛ ինչ արած), եւ որոնցից ոմանք այսօր իրենց տոմս գնել էլ չեն կարող թույլ տալ:

Թերեւս, սա է գլխավորը...

Կարծում եմ, չափազանցություն չէր լինի ասել, որ այսօր «Շանթի» «Հայ Սուպերսթար» նախագիծը, ըստ էության, իր տեսակի մեջ ամենանախաջողվածն է: Եվ պատահական չէ, որ համերգից դեռ մի քանի օր առաջ տոմսերը (2-10 հազար դրամ արժողությամբ) սպառվել էին:

Հանդիսատեսների տարիքը տատանվում էր 4-5-ից մինչեւ 60 տարեկան: (Դահլիճում, ինչպես ռոք-համերգների՝ նույնիսկ Jethro Tull-ի, Uriah Heep-ի, Իէն Գիլանի համար արդեն, ցավոք, կանոն դարձած մի իրողություն, չկային մեր այսպես կոչված «պրոֆեսիոնալ», «վաստակավոր» «աստղերը»... Պատճառները «կռահելու» անշնորհակալ գործը թողնում եւ վիրտուոզ կիթառահար Սուրեն Առուստամյանին (որի վոկալ տվյալները բառացիորեն մեր աչքի առջեւ արագորեն զարգացան՝ պատահական չէր, որ ընդամենը օրեր առաջ կայացած լեգենդար Իէն Գիլանի հետ համերգահանդիպմանը հենց Սուրենն էր, որ բոլոր ժամանակների ռոք-երաժշտության մշտադալար հիմնի՝ «Deep Purple»-ի «Smoke on the Water» գործի փայլուն կատարումով «ստիպեց», վերջ ի վերջո, երեւանյան երկու համերգներից (հիասքանչ՝ մեծավ մասամբ մեր ֆիլհարմոնիկի փայլուն կատարման շնորհիվ) հետո ձայնի հետ որոշ խնդիրներ ունեցող համաշխարհային ռոքի ամենապայծառ աստղերից մեկին, Գիլանին, ձայնակցել իրեն):

Ասել է թե որոշ զարմանք առաջացավ ինձ մոտ, թե արդյո՞ք Սիրիան ներկայացնող «ռոմանտիկ հերոս» Րաֆֆի Օհանյանը այդքան շատ sms-ներ է ստացել իր օգտին: Սակայն բոլոր «կասկածներս» միանգամից փարատվեցին, երբ համերգի ժամանակ տեսա, թե ինչպես միանգամից մի քանի տասնյակ 16-17 տարեկան աղջիկներ բառացիորեն վերցրեցին Րաֆֆիին ամուր օղակի մեջ, եւ նույնիսկ արդեն անվտանգության աշխատակիցներն էին պատրաստ միջամտելու: (Ակամայից հիշեցի վաղ 60-ականների հեռուստակադրերը, որտեղ սիրված փոփ-ռոքի, կամ, այլ կերպ ասած՝ «կարգին» էստրադային երաժշտության «վերակենդանացումը» համընկավ տասնամյակներ սպասված մի երեւույթի հետ. վերջապես ռոքի (եւ ո՛չ միայն ռոքի) լեգենդներ՝ Էլ դի Մեոլան, «Jethro Tull»-ը, «Uriah Heep»-ը, Իէն Գիլանը սկսեցին երջանկացնել (առանց չակերտների՝ Գ. Խ.) այդքան իրենց սիրող, լավ ճանաչող եւ շնորհակալ հայ հանդիսատեսին իրենց համերգներով:



Արդեն 35 տարվա «ստաժ» ունեցող ռոք-սիրահարիս փորձը ցույց է տալիս, որ այս երաժշտատեսակի երկրպագուներն իրենց մեծամասնությամբ լսում են նաեւ ջազ, սոուլ, ֆյուժն եւ այլն:

Եվ սրա բացատրությունն, ըստ իս, այն է, որ ռոքը ունի խորը բովանդակություն, քանի որ դրա հիմքում (սա կարող է որոշ ոչ-մասնագետների համար տարօրինակ հնչել) ընկած է անմահ, մշտադալար դասական երաժշտությունը: Հակառակը՝ այսինքն, որ, ասենք, ջազի երկրպագուն սիրի նաեւ ռոք, շատ ավելի հազվագյուտ բան է:

Ավելի ճիշտ կլիներ այս վերջին տարիներին «վերակենդանացված» ռոքը կոչել «սոֆթ», այսինքն «փափուկ» ռոք, քանի որ այդ ոճի երգերը շատ մեղեդային են:

Ուստի, բնավ պատահական չի թվում այն, որ նախագծի երաժշտական պրոդյուսեր, դրա, ինչպես նաեւ «Որոգայթ» (ձեր խոնարհ ծառայի համոզմամբ, լավագույն) հեռուստասերիալի, «Բանակում»-ի, «Empyray» խմբի գործնականում բոլոր երգերի եւ, Արթուր Մեսչյանի խոսքերով. «էլի մի բան, որ չեմ հիշում», հեղինակ վերջապես, երկու փոքր երեխաների մայր Գիսանե Պալյանն ավարտել է Կոմիտասի անվան պետկոնսերվատորիան: (Երբ շնորհավորելիս իրեն ասացի. «Դե, «Սուպերսթար-4»-ը ավարտվեց, մի քիչ շունչ կքաշես», Գիսանեն բացականչեց, «Դե՛, ի՞նչ ես ասում, դեռ երեխաներին (մասնակիցներին՝ Գ. Խ.) Ամերիկա պիտի տանեմ, եւ դեռ էնքան ուրիշ բաներ էլ կա՛ն...»):

...Եվ նորի՛ց Մեսչյան. «Անծանոթ, օտար դեմքեր են...քեզ հետեւում»: Այս խոսքերն անընդհատ հիշում եմ այսօրվա Երեւանով (կամ, ավելի ճիշտ կլիներ ասել՝ այն տարածքում, որը մնացել է երբեմնի «սքանչելի տուֆե քաղաք»-ից («the beatiful tufa stone», ինչպես տարիներ առաջ այն կոչեց անգլիացի մի գիտնական) շրջելիս:

ենք ընթերցողին): Դժվար է ասել, թե երեք եւ կես ժամ (!) տեւած համերգի ընթացքում «սուպերսթարներից», այդ թվում նախորդ տարիների, ո՞վ չերգեց եւ ի՞նչ չկատարվեց. հետաքրքրական է, որ դրանցից ոմանք, ինչպես ասենք, Գերմանիան ներկայացնող Իվետա Մուկուչյանը («Iva The Diva») եւ, մանավանդ, հիանալի, բազմատաղանդ մի երիտասարդ՝ Հայկ Պետրոսյանը (հայտնի դերասան եւ շոումեն Վարդան Պետրոսյանի արժանի որդին) իրենց հին եւ, հասկապես, նոր գործերը կատարեցին այնպես, որ եթե դա անեին մրցույթի ժամանակ, ապա դրա արդյունքները, ըստ ամենայնի, այլ կլինեին: (Ի դեպ, ռոք-համերգի ժամանակ հաճախ չէ, որ կլսես «Տալվորիկցի քաջ զինվոր»-ը, եւ համերգի ընթացքում սա ամենաառաջին պահն էր, երբ ամբողջ դահլիճը ոտքի ելավ եւ ձայնակցեց Հայկին): Նույնը կարելի է ասել Յուլիա Ջաքարյանի մասին («Come Together», «The Beatles»), որն այս համերգում բարոյական «ռեւանշ» վերցրեց: Կցանկանայի նաեւ հիշատակել Իվետայի եւ «The Beautified Project» խմբի (ղեկավար՝ Անդրե Սիմոնյան) համույթի անցած տարի Հայաստանում ձայնագրված առաջին («Behind the Happy Mask») սկավառակից «Stupid Love Song» («Հիմար սիրային երգ») գործի համատեղ կատարումը, եւ, իհարկե, արմավիրցի Գոռ Հարությունյանի անկեղծությունը:

...Երբ ավարտվեց «Սուպերսթար-4»-ը, սույն տողերի հեղինակի մոտ որոշ, թույլ տվեք ասել, տարակուսանք մնաց դրա արդյունքների վերաբերյալ. եթե որոշողը լիներ ձեր խոնարհ ծառան, ապա առաջին տեղը կտրվեր միանգամից երկուսին՝ անզուգական «սեւ», հուժկու ձայն ունեցող Ռախսա Ավանեսյանին (Իրան) փոփ-ռոքի հիմնադիրներին՝ լեգենդար «The Beatles» խմբի անդամներին գրեթե «հուշում էին» հենց այսպիսի աղջնակներ: Why not?): Ինչ վերաբերում է ավելի ավագ սերնդի ներկայացուցիչներին, մանավանդ՝ արական սեռի, ապա դրանց համակրանքը ավելի շատ վայելում էին Ռախսան եւ Սուրենը:

Եվ պատահական չէր, որ այս զույգի կողմից կատարված Էրոս Ռամացոտտիի եւ Թինա Թըրների զուգերգը՝ Cosa Della Vita-ն՝ բեմ վերադարձած համերգի բոլոր մասնակիցների ձայնակցությամբ, «սադրեց» տասնյակ երկրպագուների «ցատկը» դեպի բեմ եւ այնտեղ այնպիսի մի ամբոխային վիճակ ստեղծվեց, որ այս անգամ անվտանգության աշխատակիցները եւ նախագծի պրոդյուսեր Անդրե (Անդրանիկ) Սիմոնյանը ստիպված էին միջամտել:

Ըստ իս, այս նախագծի կարեւորագույն, կարելի է ասել, արժանիքներից մեկն էլ այն է, որ առանց չափազանցության, այն ունի համահայկական նշանակութուն, թե՛ ունկնդրի եւ թե՛ մասնակիցների առումով: Եվ, ամենայն հավանականությամբ, նաեւ արդեն եկել է ժամանակը, որ մեր «Հայ Սուպերսթար»-ները ներկայանան նաեւ օտար աշխարհին, իհարկե, սեփական, հայկական երգերով:

Շարունակելով խոսել նախագծի մասին, կարծում ենք, տեղին է նշել, որ վերջին երկու-երեք տարիներին երեւան եկավ, կարծում ենք, շատ մեծ չափազանցություն չէր լինի այսպես ասել՝ մի երեւույթ, այն է՝ «Շանթ» հեռուստաընկերությունը:

Դատեք ինքներդ. «Հայ Սուպերսթար», «Ժողովրդական երգիչ», «Հայկական պարեր», «Թաքնված տաղանդ», «Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր», «32 ատամ», Uriah Heep, վերջապես:

Սրանք բոլորը, ընդհանուր առմամբ, իսկապես բարձրաճաշակ ազգային նախագծեր են, մանավանդ՝ ինչ-ինչ «հայկուլիկ-մկուլիկ»-ների, «վիպոյաններ»-ի (դերասանները այստեղ, ըստ էության, մեղք չունեն) «գլուխգործոցների», ցավոք, համատարած ֆոնի վրա, եւ հենց վերջիններս են՝ առաջին հերթին (այլ ո՛չ թե «Լեւոնը», «Ռոբը» կամ «Սերժը»), որ բերում են, թույլ տվեք ասել, դեգրադացմանը եւ յումպենացմանը:

**ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՋՅԱՆ**

*Լուսանկարը՝*
*դոկտ. Արտակ Համբարյանի (ՀԱՀ)*

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## Ներկայացվեց «10 հայականավոր արքաներ» աշխատությունը

**Մեզանում առաջին անգամ «Գրքերի աշխարհ» գրախանութների ցանցի «Ուսումնական գիրք» գրախանութում տեղի ունեցավ Արտակ Մովսիսյանի հեղինակած «10 հայ ականավոր արքաները» գրքի եւ էլեկտրոնային տարբերակի շնորհանդեսը: Պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի դոցենտ, ԳԱ արեւելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող Արտակ Մովսիսյանը «Ազգի» հետ զրույցում նշեց «XX դարավերջին կրկին անկախացած Հայաստանի Հանրապետությունն այսօր ունի հնարավորություն՝ վերականգնելու հայոց պետականության անցյալի փառավոր ավանդները: Դա հնարավոր է միայն անցյալի հերոսական ոգու եւ իդեալների վերակերտմամբ: Դրա համար ժողովրդին եւ առաջին հերթին նոր սերնդին անհրաժեշտ են հերոսներ, հերոսական իդեալներ: Հենց այդ նպատակով էլ որոշեցինք «Զանգակ-97» հրատարակչության հետ ընտրել հին ու միջին դարերում ապրած խոշորագույն պետական գործիչներից տասին՝ ականավոր տասը հայ արքաների, որոնց կերպարներն այսօր ուսանելի եւ ուղեցույց կարող են լինել»: Միջոցառումը բացեց հեղինակը եւ նշեց, որ հասկապես դպրոցականները ցանկության դեպքում էլ դժվար թե մեր օրերում հասցափոր գրքերը կարդան, հետեւաբար փորձ է արվել հանրամատչելի գրականության շարք ստեղծել, որը կլինի շարունակական, իսկ այդ շարքի առաջին ծիծեռնակը «10 հայ ականավոր արքաներ» 85 էջանոց նկարներով ու մատչելի բացատրություններով գրքույկն է, ինչպես նաեւ 45-րոպեանոց, մի քանի հազար լուսանկարներով էլեկտրոնային գրքույկը:**

**Գրքում առաջին ակնարկը նվիրված է Հայկյան Արամին, որը Հայոց արքայական հնագույն իշխանությունը մարմնավորող հավաքական կերպար է: Հաջորդ երկուսը՝ Վանի տերության երկու ականավոր տիրակալներ Արգիշտի Ա-ն եւ Ռուսա Բ-ն: Ի դեպ, վերջինը մեզանում շատ քիչ է գնահատված ու տեղեկացված: Երվանդունյանց թագավորությունը ներկայացնում է իր ամենահայտնի արքան՝ Տիգրան Երվանդյանը: Արտաշեսյաններից՝ Տիգրան Բ Մեծն ու իր անկրկնելի բանաստեղծ-որդի Արտավազդ Բ-ն: Արշակունյաց արքայատնից ընտրվել են քրիստոնեությունը պետական կրոն հռչակած Տրդատ Գ Մեծը եւ մեր պատմության ամենաերիտասարդ եւ բացառիկ արքան՝ Պապը: Բագրատունիներից՝ Աշոտ Բագրատունին է նշված, որը վերականգնել է 450 տարի ընդհատված պետությունը ու դարձել է Աշոտ Ա: Ներկայացված վերջին թագավորը Կիլիկյան Հայաստանի թագավորությունը հռչակող Լեւոն Մեծագործն է:**



**Ցավալի է, որ նման արժեքավոր գրքերը, աշխատությունները գովազդելու, լայն հասարակությանը ներկայացնելու համար գումարներ ու արտացավ մարդիկ քիչ են: Մինչդեռ սերունդների դաստիարակության համար հայ արքաների կերպարները շատ օրինակելի են: Եթե կլինեն մեկենասներ, ովքեր իրենց լուման կցանկանան ներդնել այս ազգանվեր գործին, կարող են կապ հաստատել հետեւյալ էլ. հասցեով՝ info@zangak.am, www.zangak.am եւ www.book.am:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

## Ճշտում

**«Ազգ. Մշակույթ-Հավելվածի» մարտի 27-ի համարում 2008-ին Ֆրեզնոյում տպագրված Վիլյամ Սարոյանի վաղ շրջանի գործերի առաջին հրատարակության առիթով («Երիտասարդ Սարոյանը») Լուսինե Ֆերեշեթյանի անդրադարձում հոդվածագիրը Սարոյանի այս նոր գրքի հայերեն թարգմանության ցանկություն եւ հույս է հայտնում:**

**Ուշացումով տեղեկացանք, որ սույն ժողովածուի հայերեն հրատարակությունն արդեն կա՝ լույս տեսած 2009 թվականին, ԵՊՀ հրատարակչությամբ, «Ձեռնամարտ ի սեր Հայաստանի» խորագրով: Մեր թերթում գրախոսված վեպը խորագրված է «Հետեւիր ինձ», թարգմանիչը Ասատուր Սարոյանն է:**

**Մ. Բ.**

Ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում երեկ հայ մարզասերները կրկին ուրախանալու առիթներ ունեցան: Եվրոպայի նախկին չեմպիոնուհի Մելինե Դալուզյանը հաջողությամբ նշեց նորամուտը նոր՝ մինչեւ 69 կգ քաշային կարգում՝ երկամարտի 260 կգ արդյունքով ճանաչվելով 2-րդը: Ոսկե մեդալների համար պայքարում Մելինեի գլխավոր մրցակցուհին Եվրոպայի ներկայիս չեմպիոնուհի, ռուսաստանցի Օքսանա Սլիվենկոն էր, որն անձնական քաշով ընդամենը 40 գրամով էր թեթեւ մեր մարզուհուց: Դա Մելինեի համար լրացուցիչ դժվարություններ էր ստեղծել, քանի որ Սլիվենկոյին գերազանցելու համար անհրաժեշտ էր նրանից նվազագույնը 1 կգ ավելի բարձրացնել:




Մելինեն արժանապատվորեն, մինչեւ վերջ պայքարեց Եվրոպայի չեմպիոնուհու տիտղոսի համար: Պոկում վարժությունում նա հաջորդաբար բարձրացրեց 110 եւ 115 կգ-անոց ծանրաձողերը, իսկ ահա 3-րդ փորձն անհաջող ստացվեց: 117 կգ ծանրությունը հաղթահարել չհաջողվեց: Այդ քաշը ենթարկվեց Սլիվենկոյին, որն էլ պոկում վարժությունում ոսկե մեդալի արժանացավ: Մելինեն դարձավ արծաթե մեդալակիր՝ անձնական ավելի թեթեւ քաշի շնորհիվ առաջ անցնելով նույնպես 115 կգ բարձրացրած բելառուսցի Շեմշաթ Տուլյաեւայից:

Հրում վարժությունում Մելինեն իրեն գերազանց դրսեւորեց՝ հաջորդաբար բարձրացնելով 135, 139 եւ 145 կգ ծանրությունները: Նույնպիսի ցուցանիշի հասավ նաեւ Օքսանա Սլիվենկոն, որն ավելի թեթեւ քաշի շնորհիվ հրում վարժությունում էլ ոսկե մեդալի արժանացավ՝ արծաթե պարգեւը թողնելով Մելինեին: Սլիվենկոն երկամարտի 262 կգ արդյունքով կրկին հռչակվեց Եվրոպայի չեմպիոնուհի: 244 կգ արդյունքով բրոնզե մեդալակիր դարձավ բելառուսցի Շեմշաթ Տուլյաեւան:

Հետաքրքրական է, որ նախորդ տարվա Եվրոպայի առաջնությունում Օքսանա Սլիվենկոն հաղթել էր երկամարտի 255 կգ արդյունքով՝ 10 կգ-ով գերազանցելով 2-րդ տեղը զբաղեցրած Նազիկ Ավդալյանին: Իսկ ահա աշխարհի առաջնությունում Նազիկը չեմպիոնուհի էր հռչակվել 266 կգ արդյունքով՝ 2 կգ-ով առաջ անցնելով Սլիվենկոյից:

Մելինեի հաջող ելույթից հետո մարզասերների ուշադրությունը բեւեռվեց մինչեւ 85 կգ քաշային ծանրորդների մրցավեճին: Հայաստանը ներկայացնում էին Արա Խաչատրյանն ու Գեւորգ Պողոսյանը, որոնք հիանալի ելույթ ունեցան: Գեւորգ Պողոսյանը հռչակվեց Եվրոպայի չեմպիոն, Արա Խաչատրյանը՝ փոխչեմպիոն:

Ճիշտ է, մեր ծանրորդներն անհաջող ելույթ ունեցան պոկում վարժությունում՝ միայն մեկ մոտեցման ժամանակ բարձրացնելով 165 կգ ծանրությունը: Ավելի թեթեւ անձնական քաշի շնորհիվ պոկում վարժության բրոնզե մեդալը նվաճեց Արա Խաչատրյանը, որը վնասվածքի պատճառով բավական ժամանակ մրցահարթակ դուրս չէր եկել: 171 կգ արդյունքով ոսկե մեդալը նվաճեց բելառուսցի Նիկոլայ Նովիկովը, որին մեկ կգ-ով զիջեց թուրք Իզետ Ինջեն՝ դառնալով արծաթե մրցանակակիր:

Հրում վարժությունում շատ լարված պայքար ընթացավ մեր ծանրորդների եւ Նիկոլայ Նովիկովի միջեւ: Արա Խաչատրյանը սկսեց 199 կգ-ից, մեկ կգ ավելի բարձրացրեց Գեւորգ Պողոսյանը: Նիկոլայ Նովիկովը մրցումն ավարտեց 196 կգ-ով՝ 2 անգամ անհաջողության մատնվելով 202 կգ-ը բարձրացնելիս: Իսկ դա նշանակում էր, որ չեմպիոնի տիտղոսի համար պայքարն ընթանալու էր հայ ծանրորդների միջեւ: Հաջողությունն ուղեկցեց Գեւորգ Պողոսյանին, որը երկամարտի 369 կգ արդյունքով հռչակվեց Եվրոպայի չեմպիոն՝ ոսկե մեդալ նվաճելով նաեւ հրում վարժությունում: Արա Խաչատրյանը թիմակցից հետ մնաց ընդամենը 1 կգ-ով՝ դառնալով Եվրոպայի փոխչեմպիոն: 367 կգ արդյունքով բրոնզե պարգեւը նվաճեց Նիկոլայ Նովիկովը:

# Գեւորգ Պողոսյանն ուժեղագույնն է Եվրոպայում

## *Մելինե Դալուզյանն ու Արա Խաչատրյանը Եվրոպայի փոխչեմպիոններ*




Գեւորգ Պողոսյան




Արա Խաչատրյան

Կանանց մինչեւ 63 կգ քաշային կարգում չեմպիոնության համար չափազանց համառ պայքար ծավալվեց թուրք Սիբել Սիմսեկի եւ ռուսաստանցի Սվետլանա Ցարուկաեւայի միջեւ: Ի վերջո ոսկե մեդալի բախտը վճռեց մարզուհիների անձնական քաշը: Երկուսն էլ երկամարտում ցույց տվեցին միեւնույն արդյունքը՝ 244 կգ: Եվրոպայի չեմպիոնուհի հռչակվեց թուրք մարզուհին, որն անձնական քաշով 80 գրամով թեթեւ էր Ցարուկաեւայից: Բրոնզե մեդալակիր դարձավ ռումինացի Ռոքսանա Կոկոսը, որը երկամարտում ցույց տվեց 229 կգ արդյունք:

Պոկում վարժությունում Սվետլանա Ցարուկաեւան երեք փորձերն էլ հաջող կատարեց եւ 114 կգ արդյունքով արժանացավ ոսկե մեդալի: Սիմսեկը բավարարվեց 110 կգ-ով՝ դառնալով արծաթե մեդալակիր: Բրոնզե մեդալը նվաճեց ռուսաստանցի Մարինա Շայնովան՝ 100 կգ:

Հրում վարժությունում բոլորից հաջողը Սիբել Սիմսեկի ելույթն էր, որը ցույց տվեց 134 կգ: 130 կգ-ով արծաթե մեդալի արժանացավ Սվետլանա Ցարուկաեւան, որը 40 գրամով թեթեւ էր նույնպիսի արդյունք ցույց տված եւ բրոնզե մրցանակակիր դարձած ռումինացի Ռոքսանա Կոկոսից: Նշենք նաեւ, որ Սիմսեկը փորձեց 1 կգ-ով գերազանցել ռուսաստանցի Սվետլանա Շիմկովային պատկանող հրում վարժության Եվրոպայի ռեկորդը, սակայն չկարողացավ բարձրացնել 142 կգ-անոց ծանրաձողը:

# Քառյակը շարունակում է պայքարը

**Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի մրցաշարում հայտնի դարձան կիսաեզրափակիչի մասնակիցները: Ապրիլի 22-ին կայանալիք առաջին հանդիպումներում կմրցեն «Ատլետիկոն» ու «Լիվերպուլը», «Համբուրգն» ու «Ֆուլհեմը»: Պատասխան հանդիպումները կկայանան մեկ շաբաթ անց: Եզրափակիչ հանդիպումը տեղի կունենա մայիսի 12-ին Գերմանիայի Համբուրգ քաղաքում:**

**Անգլիական «Լիվերպուլը» սեփական հարկի տակ խոշոր հաշվով (4-1) հաղթանակ տարավ պորտուգալական «Բենֆիկայի» նկատմամբ՝ ռեւանշի հասնելով առաջին խաղում կրած պարտության (1-2) դիմաց: Լիվերպուլցիներից հատկապես աչքի ընկավ Ֆեռնանդո Տորեսը՝ 2 անգամ գրավելով մրցակցի դարպասը:**

**«Լիվերպուլի» մրցակիցը որոշվեց իսպանական երկու թիմերի՝ «Ատլետիկոյի» եւ «Վալենսիայի» մրցավեճում: Վալենսիայում կայացած առաջին խաղում գրանցվել էր մարտական ոչ-ոքի (2-2), ինչը պատասխան խաղում հաջորդ փուլ դուրս գալու լավ հնարավորություն էր ընձեռել «Ատլետիկոյին»: Վերջինս թեեւ գոլ չխփեց սեփական հարկի տակ, սակայն իր դարպասն էլ անառիկ պահեց ու շնորհիվ մրցակցի դաշտում խփած գնդակների, մտավ կիսաեզրափակիչ:**

**Գերմանական «Համբուրգը» եւս մեկ քայլով մոտեցավ հարազատ մարզադաշտում կայանալիք եզրափակիչին: Մրցակցի դաշտում էլ գերմանական ակումբը հաղթեց՝ 3-1 հաշվով առավելության հասնելով բելգիական «Ստանդարտի» նկատմամբ: Իսկ ահա Գերմանիայի մյուս ներկայացուցչին՝ «Վոլֆսբուրգին» չհաջողվեց կրկնել «Համբուրգի» հաջողությունը: «Ֆուլհեմի» հետ սեփական հարկի տակ անցկացրած խաղում էլ «Վոլֆսբուրգը» պարտվեց ու դուրս մնաց հետագա պայքարից: Միակ գոլը խփեց Զամորան խաղի 1-ին րոպեին:**

ՇԱԽՄԱՏ

# Դուբայում հայերը հաջող են հանդես եկել

**Դուբայում ընթացող շախմատի մրցաշարի 4-րդ տուրում առաջատարների թվում գտնվող Հրանտ Մելքումյանն ու Տիգրան Քոթանջյանն առաջին միավորները կորցրին: Նրանք հաշտություն կնքեցին համապատասխանաբար Դրոնավալի Հարիկայի եւ Էդուարդո Իտուրիզագայի հետ: Տուրը հաջող էր Գաբրիել Սարգսյանի համար, որը հաղթեց Վադիմ Մալախատկոյին: 4 տուրից հետո Սարգսյանը, Մելքումյանն ու Քոթանջյանը 3,5 միավորով հետապնդում են միանձնյա առաջատար, իրանցի Էհսան Ղաեմին: Վերջինս իր 4-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Ռավիխանդրան Տեջասի նկատմամբ:**

**Դուբայում 12-րդ անգամ է անցկացվում շախմատի այս մրցաշարը: Հայ շախմատիստները բավական հաջող են հանդես եկել Դուբայում: 1999-ին կայացած առաջին մրցաշարի հաղթող է ճանաչվել Վլադիմիր Հակոբյանը: 2001-ին գլխավոր մրցանակին արժանացել է վաղամեռիկ գրոսմայստեր Կարեն Ասրյանը: Անցած տարի հիանալի հանդես եկան Տիգրան Քոթանջյանն ու Աշոտ Անաստասյանը, որոնք 9 հնարավորից վաստակելով 7 միավոր, ռուսաստանցի Դմիտրի Բոչարովի հետ բաժանեցին 1-3-րդ տեղերը:**




**Դուբայի մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 45 հազար դոլար է: Առաջին մրցանակը 8000 դոլար է, որը կստանա հաղթողը: 2-րդ տեղ զբաղեցրած շախմատիստը կպարգեւատրվի 5000 դոլարով, 3-րդ տեղը՝ 4000-ով: Ընդհանուր առմամբ դրամական պարգեւների կարժանանան 15 շախմատիստներ:**

# Երեւանը կհյուրընկալի հոկեյիստներին

**Ապրիլի 14-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կմեկնարկի տափօղակով հոկեյի աշխարհի C խմբի առաջնությունը: Կմասնակցեն Հայաստանի, Մոնղոլիայի, Հարավաֆրիկյան Հանրապետության եւ Հյուսիսային Կորեայի հավաքականները: Թիմերը միմյանց հետ մեկական հանդիպում կանցկացնեն, որից հետո առաջին երկու հորիզոնականներում տեղ զբաղեցրած հավաքականները հաղթողի կոչումը կվիճարկեն եզրափակիչում:**

**Մինչեւ մրցաշարի մեկնարկը, ապրիլի 12-ին ՀՀ հավաքականն ընկերական մրցախաղում ուժերը կչափի Վրաստանի հոկեյիստների հետ: Նախօրեին վրացիները կմրցեն ՀԱՀ-ի հավաքականի հետ: Մարզասերներին տեղեկացնենք, որ առաջնության հանդիպումները դիտելու համար մուտքն ազատ է:**

**ՀՀ հավաքականը մեկնարկային խաղում, ապրիլի 14-ին կմրցի ՀԱՀ-ի հավաքականի հետ: Հանդիպումը կսկսվի ժամը 20-ին: Հաջորդ օրը նույն ժամին կսկսվի Հայաստան-Կորեա մրցախաղը, իսկ ապրիլի 17-ի երեկոյան մեր հոկեյիստների հյուրը կլինի Մոնղոլիայի ընտրանին: Եզրափակիչ հանդիպումը կկայանա ապրիլի 18-ին, ժամը 20-ին: Մինչ այդ, ժամը 16-ին կմրցեն 3-րդ տեղի համար պայքարող թիմերը:**

# Աբրահամ-Ֆրոխ մենամարտը կկայանա օգոստոսի 21-ին

**Երկրորդ միջին քաշային կարգում 6 ուժեղագույն բռնցքամարտիկների մրցաշարի նախնական փուլի վերջին հանդիպումն Արթուր Աբրահամը կանցկացնի օգոստոսի 21-ին բրիտանացի բռնցքամարտիկ Կառլ Ֆրոխի հետ: Վերջինս երկրորդ միջին քաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնն է: Մենամարտի հնարավոր վայրերն են Նոթինգհեմը եւ Բեռլինը: Իհարկե, Արթուր Աբրահամին հարմար է մենամարտել իր համար հարազատ դարձած Բեռլինում:**

**Բեռլինում մենամարտելու հավանականությունը կաճի, եթե ապրիլի 24-ին Ֆրոխը հաղթի Միկել Կեսլերին, ինչը նրան կիսաեզրափակիչի ուղեգիր կպարգեւի: Այդ դեպքում թերեւս նա համաձայնվի մենամարտել Բեռլինում: Ֆրոխը 32 տարեկան է: Նա առայժմ պրոֆեսիոնալ ռինգում անպարտելի է՝ հաղթելով բոլոր 26 մենամարտերում: Արթուր Աբրահամը 32 մենամարտերից միայն մեկում է պարտվել:**

# Չեմպիոն դառնալ չհաջողվեց

**Հայազգի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Վիկտոր Օգանովը երկրորդ միջին քաշային կարգում չկարողացավ նվաճել Ավստրալիայի չեմպիոնի տիտղոսը: Մայքլ Բոլինգի հետ մենամարտի 8-րդ ռաունդում նա պարտվեց տեխնիկական նոկաուտով:**

# Սեւակ Մխիթարյանը հաջող է մեկնարկել

Իտալական Լա Լագունա քաղաքում ընթացող շախմատի մրցաշարում հաջող է հանդես գալիս բրազիլահայ Գրիգոր Սեւակ Մխիթարյանը: 5 տուրից հետո հայ շախմատիստը վաստակել է 4 միավոր: Նա Անտոնիո Արանայի եւ Անտոնիո Լոպեսի նկատմամբ տոնած հաղթանակներով մեկնարկեց, այնուհետեւ ոչ-ոքի խաղաց Քամիլ Միտոնի հետ: 4-րդ տուրում Մխիթարյանը հաղթեց իտալացի Միոդրագ Տոդորցեւիչին, իսկ հաջորդ մրցախաղը սերբ Ալեքսանդր Ստրիկովիչի հետ ավարտեց ոչ-ոքի:

Մրցաշարին մասնակցում են 122 շախմատիստներ, որոնք կանցկացնեն 9 տուր: 4,5-ական միավորով առաջատարը գլխավորում են Միխայիլ Ուլիբինը, Յուրի Գոնսալեսը, Հոլդեն Հեռնանդեսը եւ Բրյան Կուրայիցան: 6-րդ տուրում Մխիթարյանը սեւերով կմրցի գրոսմայստեր Օլեգ Կոռնեեւի հետ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

AZG NEW PDF.qxd 09/04/2010 22:58 Page 1



# Զրպարտանքն ապաքրեականացնող օրենքը ցավոտ պետք է լինի, բայց ոչ թալանչիական

*1-ին էջից*

## Լրագրողամերժ կարծիքներ

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ **Մեսրոպ Հարությունյանը**, ապաքրեականացմանը կողմ լինելով, նկատեց, թե վիրավորելու համար հրապարակային արտահայտություն ձեւակերպումից ստացվում է, որ դատարանը սեփական կարծիքի համար մարդուն կարող է պատասխանատվության ենթարկել կամ պահանջել հերքելու այդ կարծիքը, ինչը հակասահմանադրական եւ անտրամաբանական է: Նա հակասություն էր գտել նաեւ փաթեթի եւ Եվրոպական կոնվենցիայի միջեւ այն պարագայում, երբ վիրավորանքի մեջ փաստերը չեն տարանջատվում կարծիքներից եւ գնահատող դատողություններից: Երրորդ հակասությունը Մ. Հարությունյանը հայտնաբերել էր նախագծի եւ ԶԼՄ-ների մասին գործող օրենքում, ըստ որի այնպիսի նախապայմաններ կան տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից ազատվելու դեպքերը նկարագրելու դրույթներում, որ ստացվում է, թե ԶԼՄ-ները միայն դատարանում արված արտահայտությունները կարող են մեջբերել. զրպարտության դեպքում անձից կարող են պահանջել միանվագ փոխհատուցում՝ նվազագույն աշխատավարձի 500-ապատիկի չափով, իսկ նույնը՝ ԶԼՄ-ներով տարածելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով, իսկ լրատվություն իրականացնողից 2000-ապատիկի չափով: Վիրավորանքի դեպքում՝ համապատասխանաբար կիսովին պակաս: Փաստորեն, ըստ Մ. Հարությունյանի, այս հոդվածներով լրատվամիջոցներին մղում են ինքնագրաքննության:

Երեւանի մամուլի ակումբի նախագահ **Բորիս Նավասարդյանը** համոզված էր, որ փաթեթի մշակման ժամանակ երկրի առանձնահատկությունները նկատի չեն առնվել՝ իրականում զրպարտությունն այս փաթեթով չի ապաքրեականացվում, քանի որ սուտ մատնության հոդվածը մնում է քրեական օրենսգրքում: Օրենքը քիչ հստակ մեխանիզմներ է պարունակում՝ կիրառման հետ կապված, ավելի շատ սկզբունքներ կան այդ օրենքում, տուգանքի գումարի չափն էլ սահմանում է դատարանը, սա կարող է աշխատել, երբ նախադեպային իրավունքը կիրառվեր մեզ մոտ. «Չկառչենք օրենքի այս առաջին ընթերցմամբ ընդունումից, փորձենք այս փուլում լուրջ քննարկումներ կազմակերպել երկրի ներսում», ասաց նա՝ նկատելով, որ Վենետիկի փորձագետն (ով փաթեթի մասին մի անգամ կարծիք տվել է) այն միջավայրից է, որտեղ նախադեպային իրավունքն աշխատել է, մինչդեռ մեր առաջատար լրագրողներից շատերը հնչեցրել են՝ մենք պատրաստ չենք փոխարինել քրեական պատասխանատվությունը նյութական պատիժներով: Բ. Նավասարդյանը մեջբերեց **«Ազգի»** խմբագրի կարծիքը, որ ասել էր քննարկման ժամանակ, թե պատրաստ է տարիուկես նստել, քան թե վճարել որեւէ գումար, որովհետեւ գումար վճարելը կնշանակի թերթի փակում. «Այդ կարծիքը կատակով չի հնչում, դա լուրջ կարծիք է, որը մենք պիտի հաշվի առնենք: Եթե այդ քննարկումները հիմք դառնային այս օրինագծին, միգուցե մենք ավելի ճիշտ որոշումներ կունենայինք»: Ըստ նրա՝ լրատվամիջոցների ինքնակարգավորման մեխանիզմները հաշվի չեն առնվել, թեեւ քաղաքական ազդեցությունների տակ գտնվող լրատվամիջոցների մեծ մասը չի ցանկանում մտնել ինքնակարգավորման դաշտ եւ ենթարկվել էթիկայի վարքականոնին: Նա առաջարկեց շարունակել քննարկումները, որ լուրջ եւ խոր փաստաթուղթ ստեղծվի, քանի որ. «Սկզբունքներին համաձայն ենք, մնում է լուրջ բովանդակություն մտցնել առաջարկվող շրջանակներում»: Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ **Աշոտ Մելիքյանն** էլ առաջարկեց ստեղծել աշխատանքային խումբ՝ օգնելու փաթեթի բարելավմանը, նաեւ՝ նվազեցնել տուգանքների չափը, որը մեր պայմաններում լրատվամիջոցների համար մեծ գումարներ են:

Հետաքննող լրագրողների ընկերակցության նախագահ **Էդիկ Բաղդասարյանը**, սակայն, համարում էր, որ այսօր մեզ այս օրենսդրական փոփոխություններն անհրաժեշտ չեն, որովհետեւ երկիրն ընդհանրապես պատրաստ չէ դրան, դատական համակարգ գոյություն չունի, մինչդեռ դատավորները պիտի որոշողը լինեն. «Ես հարյուրավոր-հազարավոր օրինակներ կարող եմ բերել դատական որոշումներից, որոնք կայացված են կամ հրահանգված, կամ կաշառքով, այնպես որ՝ թող չասեն, որ օրենքը լրագրողների օգտին է: Եթե լրագրողի դեմ որոշում կայացվի՝ հայցվորի փաստաբանի ծախսերը, որոնք հազարավոր դոլարներ են կազմում, պետք է փոխհատուցվեն: Դատարաններում հին օրենքով էլ, նորով էլ շարունակելու են անել այն, ինչ մինչեւ հիմա անում էին», նկատեց նա: Քննարկմանը հետեւող Աննա Իսրայելյանն էլ այն կարծիքին էր, որ այս քննարկումը որեւէ բան կտա այն ժամանակ, երբ առաջարկները, որոնք հնչում էին ելույթներում, դրվեն սեղանին եւ առավել եւս՝ եթե հեղինակները հաշվի առնեն հնչած առաջարկները, մասնավորապես այն առումով, որ օրենքում առանձնահատուկ վերաբերմունքը ԶԼՄ-ների նկատմամբ վերանայվի:

Լսումներն ամփոփող օրենքի համահեղինակները ու քննարկումը կազմակերպած պետաիրավական հանձնաժողովի նախագահը գոհ էին քննարկումից, որպես նպատակին ծառայող: **Դավիթ Հարությունյանն** առաջարկեց երկուշաբթի օրվանից առաջարկ անողների ուժերով ձեւավորել աշխատանքային խումբ եւ օգնել լրամշակելու փաթեթը: Թեեւ նա չկիսեց հարցադրումներից շատերը, փակուղային ճանապարհին էլ դեմ էր՝ պատիվ, արժանապատվություն հասկացությունները սահմանելու, սակայն համաձայն էր այնպես գրել օրենքը, որը թույլ կտա տարմեկնաբանությունները բացառել: Որ դատական համակարգում այսօր ֆորմալիզմը մեծ է, պետք է ձեւավորել լավ դատական ավանդույթ, նա էլ համաձայն էր, բայց դա չի նշանակում, որ պետք է բացառենք դատական համակարգը, դա կնշանակի՝ անհասկանալի ուղղությամբ ենք շարժվում: Դատարանը պետք է սահմանի այն պատասխանատվության աստիճանը, որը բավական ցավոտ լինի (բայց ոչ թալանչիական), ու զրպարտողներն ու վիրավորողները գայթակղություն չունենան նոր վիրավորանք հասցնելու. սա օրենքով պետք է ամրագրվի, քանի որ մեր դատական համակարգը պատրաստ չէ նաեւ այսպիսի փաթեթի նաեւ Դ. Հարությունյանի կարծիքով: Իսկ նրա տեղակալ **Ա. Շահբազյանն** ուրախ էր, որ քննարկումների ընթացքում գիտակցվեց անհրաժեշտությունը, որ վիրավորելու համար պետք է պատասխանատվություն կրել. «Այն, որ երկրում լրատվամիջոցներից կամ լրատվական կորպուսներից ոմանք վարկաբեկելը, վիրավորելն ու զրպարտությունը նաեւ բիզնեսի առարկա եւ միջոց են դարձրել, սա ակնհայտ է շատերի համար», ասաց նա՝ նշելով, թե իրազեկ եւ հավաստի աղբյուրների քողի տակ քաղաքական ուժերի եւ քաղաքական գործիչների վերաբերյալ ինչ ասես գրվում եւ ասվում է՝ էլ դավադիր գործունեություն, էլ գաղտնի ծրագրեր ու գաղտնի ուխտեր, որոնք չեն արդարացել, բայց նրանք իրենց հրաշալի վարկաբեկիչ դերը կատարել են՝ քաղաքական խնդիրներ լուծելու կամ որպես քաղաքական մրցակցություն ծառայելու իմաստով:

Հիմա մնում է, որ քաղաքական գործիչներն իրենց պաշտպանելու համար ստեղծված փաթեթը երկրորդ ընթերցման ժամանակ այնպես լրամշակեն, որ մեր վզին չփաթաթեն կոռումպացված դատական համակարգի ձեռքին խաղալիք դառնալու պարտադրանքը:

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ

# Ողջամիտ ժամկետներն անցել ե՞ն

Էրդողան-Սարգսյան հանդիպումը կարո՞ղ է խանգարել Ցեղասպանության ճանաչման գործընթացին: Այս հարցին ի պատասխան խորհրդարանական ճեպազրույցների ժամանակ ՀՀԿ խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանը** պատասխանեց, թե հայ-ամերիկյան փոխհարաբերությունների համատեքստում է կարեւորում Հայաստանի նախագահի այցը ԱՄՆ: Իսկ հայ-թուրքական արձանագրությունների վերաբերյալ հարցին ի պատասխան ասել է. «Ես այսօր հայտարարում եմ, որ ողջամիտ ժամկետներն անցել են, եւ մենք պատրաստ ենք մեր ստորագրությունները հետ վերցնել: Բայց դա կանենք քաղաքականապես ամուր բազա ունենալով, որպեսզի երկիրը շահեկան վիճակի մեջ ընկնի: Առավել եւս համոզված չեմ՝ Թուրքիայի մեջլիսն արձանագրությունները ե՞րբ կհաստատի, եւ Հայաստանն էլ կհաստատի, ու գնացքն այստեղ կանգ կառնի: Սա գործընթաց է, որն անկախ ելքերից, արդեն մեկնարկել է, եւ գնալով ավելի են բազմապատկվում այն գործիքները, որոնցով փորձում ենք խնդիրը լուծել»: Իսկ Սերժ Սարգսյանի պաշտոնավարման տարիների մասին էլ ասաց, թե նախագահի ակտիվ նախաձեռնողական քաղաքականության շնորհիվ ամբողջ աշխարհը յուրացրել է մեր խնդիրները:

ՀՅԴ-ից **Արծվիկ Մինասյանը** նույն թեմայով նկատեց, թե մեր արտաքին քաղաքականությունը պետք է միտված լինի ազգային պետական շահերի սպասարկմանը, իսկ Թուրքիան փորձելու է արձանագրությունների ստորագրումը պահել օրակարգում: Իսկ ահա նախագահ Սարգսյանի պաշտոնավարման տարիներին, ըստ նրա, ներքաղաքական լարվածությունը մեղմվել է:

ՕԵԿ խմբակցության ղեկավար **Հեղինե Բիշարյանը** գտնում էր, որ մեր արտաքին քաղաքականությունը շատ լավ է ընթանում, իսկ նախագահ Սարգսյանի պաշտոնավարման տարիներին ներքաղաքական իրավիճակը կայուն է: «Ժառանգության» **Ստյոպա Սաֆարյանն** ասում էր, թե պաշտոնական Երեւանը հայ-թուրքական գործընթացից դուրս գալու որոշում չի կարող ընդունել, իսկ Թուրքիան շարունակում է ժամանակ շահել, չնայած գործընթացը մահացած է: Իսկ նրա կուսակից **Արմեն Մարտիրոսյանը** Ս. Սարգսյանի պաշտոնավարման տարիներին առաջխաղացում չի նկատել՝ մարտի 1-ի դեպքերի հանգուցալուծում չի եղել, քաղբանտարկյալները բանտերում են դեռ, ընտրական համակարգը չի փոխվել, իսկ արտաքին քաղաքականության մասին եւս դրական բան չի կարող ասել:

Ահա այսպիսի տարբեր կարծիքներ:

**Ս. Խ.**

**Մրցույթի հրավեր 081/10/PRO**

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ 4 պետական քոլեջներին ավտոուսուցման սարքավորումներ մատակարարելու համար:

Մրցույթի հրավերին մանրամասն կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. ապրիլի 22, ժամը 17:00:

UNDP

ANI TOUR

**Անիտուր պատմամշակութային զբոսաշրջային գործակալությունը մայիս-հոկտեմբեր ամիսներին կազմակերպում է.**

3-օրյա՝ Կարս, Անի, Արդահան, Չլդր լիճ

7-օրյա՝ Պատմական Հայաստանի մայրաքաղաքները Կարս, Անի, Վան, Տիգրանակերտ

10-օրյա՝ Իրան (Թավրիզ, Ուրմիա, Սալմաստ, Թադեի վանք, Մակու)

Արեւմտյան Հայաստան (Վան, Մուշ, Էրզրում, Կարս, Անի), Թբիլիսի:

15-օրյա՝ Արեւմտյան Հայաստան (Կարս, Անի, Վան, Տիգրանակերտ ),Կիլիկիա (Հռոմկլա,Նեմրութ սար,Այնթապ, Մուսա լեռ, Ադանա, Սիս, Անարզաբա, Կոռիկոս, Խարբերդ, Էրզրում), Հալեպ եւ Կիպրոս:

**Հատուկ տուր**

Վերելք Բիբլիական Արարատի գագաթ /7օր/

Տեղեկությունների համար զանգահարել՝

**Հեռ: 519226, 094203206, 091203206 կամ այցելել**

**Իսահակյան 28,1-ին հարկ սեն. 20**

**www.anitour.org info@anitour.org**

**ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ-ի բիզնես ինֆորմացիայի եւ խորհրդատվության բաժինն առաջարկում է կազմակերպել էքսպորտային վարկեր Սլովակիայից Հայաստան եւ ԼՂՀ**

Վարկերը երաշխավորվում են Սլովակիայի պետության կողմից.

- հատուկ ապրանքային վարկատեսակ
- կարճաժամկետ, միջին ժամկետի եւ երկարաժամկետ գործարքներ
- ամբողջական կամ մասնակի ֆինանսավորում
- վարկերը տրամադրվում են ցանկացած արտարժույթով:

Այս ծրագրի շրջանակներում հնարավոր է ներկրել Եվրոպական արտադրության որակյալ ծառայություններ եւ ապրանքատեսակներ.

- բժշկական սարքավորումներ,
- գյուղատնտեսական տեխնիկա եւ նյութեր,
- շինարարական տեխնիկա, հոսքագծեր եւ նյութեր,
- կենցաղային տեխնիկա,
- տարբեր նշանակության եւ տարողության տրանսպորտային միջոցներ,
- կլիմատիզացիոն համակարգեր,
- սննդամթերք,
- եւ այլն:

Ներկրվող ապրանքների ու ծառայությունների ոլորտների եւ տեսակների սահմանափակում չկա:

Հատուկ բարենպաստ պայմաններով իրականացվում են ՀԷԿ-երի կառուցման, սարքավորումների ներկրման եւ գործարքման աշխատանքները:

Վարկերը տրամադրվում են տարեկան 7-8% տոկոսադրույքով:

Մարման ժամկետը՝ 5-8 տարի:

Մանրամասներին ծանոթանալու համար կարող եք այցելել **www.nt.am** կամ **www.market. nt.am** էլ. կայքերը, գրել մեզ՝ **manush@nt.am** հասցեով, այցելել մեզ՝ Երեւան, Իսահակյան 28, կամ զանգահարել **+37410 56-59-65, 094 366 989** հեռախոսահամարներով:

***«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր***

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

♦ ***Օրենսդրական նորություններ*** ♦ ***Պարզաբանումներ*** ♦ ***Խորհրդատվություն***

***«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար***

**Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:

Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 9.04.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: